



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ



ՖՐԻԴՐԻԽ-ԷԲԵՐՏ- ՀԻՄՆԱԴՐԱՄ

**ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Երևան 2012

Ծրագիրն իրականացվել է Երեւանի մամուլի ակումբի կողմից՝ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: Այստեղ լայնորեն օգտագործվել են մի շարք դատական գործերով Տեղեկատվական վեճերի խորհրդի, ինչպես նաեւ «Իրավունքի գերակայություն» հասարակական կազմակերպության կողմից գրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի 2012 թվականին արված մոնիթորինգի արդյունքում վերհանված եզրակացությունները:

Գիրքը պատրաստվել է Երեւանի մամուլի ակումբի փորձագիտական խմբի կողմից:  
Գրքի ստեղծման աշխատանքները համակարգել են Բորիս Նավասարդյանը, Իռեն Ալոյանը եւ Արա Ղազարյանը:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԸ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱՄՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԶՍՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ	6
ԲԱՐԵԽԻՂՃ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՈՂԶԱՄԻՏ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ	15
ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՆՈՐ ՄԵԴԻԱՅՈՒՄ	25
ՓԱՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	31
ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄՆ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ	37
ԱՆՁԻ ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎԻ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՀԱՄԱԶՍՏՈՒԹՅՈՒՆԸ	43
«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ	49
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ	52

## ՆԱԽԱԲԱՆ

2010 թվականի մարտի 18-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրինագծերը: Օրենսդրական այս փոփոխություններով Հայաստանում ապաքրեականացվեց զրպարտության եւ վիրավորանքի ինստիտուտը: ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը կարգավորում է անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները:

Զրպարտությունն ու վիրավորանքն ապաքրեականացնող օրենսդրական փոփոխություններն անմիջապես հայտնվեցին լրագրողական հանրության եւ իրավապաշտպան կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Վերջիններիս, մասնավորապես, մտահոգում էր, որ հրապարակումների իրական հանրային արձագանքի եւ հասցված վնասի չափի որոշման հարցում դատարանները, առանց տեղեկատվության հասարակական նշանակությունը եւ պատասխանողի ֆինանսական դրությունը հաշվի առնելու, կարող էին կամայական վճիռներ կայացնել, ինչն էլ իր հերթին ավելի կճնշեր երկրում առանց այն էլ սահմանափակ խոսքի ազատությունը: Եվ, իսկապես, ապաքրեականացումից հետո առաջին ամիսների հայաստանյան դատական պրակտիկան ապացուցեց վերոնշյալ մտահոգությունների հիմնավորված լինելը: Դատական նախադեպերի դիտարկումը ցույց տվեց, որ ընդունված օրենսդրական փոփոխությունները բոլորովին էլ ՀՀ քաղաքացիների ճնշող մեծամասնության պատվի եւ արժանապատվության պաշտպանության միջոցներ չդարձան: Լրատվամիջոցներին խոշոր դրամական փոխհատուցումների ենթարկող դատական ակտերը շատ հաճախ զսպող ազդեցության (*chilling effect*) միտում ունեին ազատ արտահայտվելու իրավունքի վրա, ինչն իր հերթին վտանգում էր տեղեկատվություն ստանալու հանրային շահը: Այս իրավիճակը հիմնականում պայմանավորված էր դատարանների կողմից զրպարտության եւ վիրավորանքի օրենսդրության ոչ միատեսակ կիրառմամբ, երբ վերջիններիս արտահայտած հակասական իրավական դիրքորոշումները ոչ թե ծառայում էին իրենց լեգիտիմ նպատակին, այլ օգտագործվում էին որպես քաղաքական եւ գործարարական վերնախավի կողմից լրատվամիջոցներին պատժելու գործիք: Հետագայում, սակայն, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների արձագանքների եւ փորձագետների հրապարակած կարծիքների շնորհիվ նկատվեց դատական պրակտիկայի բարելավման միտում:

Սույն ուսումնասիրությունը վերլուծում է 2010 թվականի ապաքրեականացումից ի վեր մինչ 2012 թվականի վերջը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով հայցերի հիման վրա Հայաստանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված ըստ էության վճիռները եւ որոշումները, ՀՀ Քաղաքացիական վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանների որոշումները: Մասնավորապես, հետազոտվել են այն գործերը,

որոնցում փաստերը գնահատելիս դատարանները կիրառել են այնպիսի սկզբունքներ, չափանիշներ եւ չափորոշիչներ, որոնք հակասում են միջազգային պրակտիկային եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին եւ վտանգի տակ են դնում լրատվամիջոցների խոսքի ազատության իրավունքը: Մյուս կողմից, վերհանվել են դատարանների այն դիրքորոշումները, որոնք ընդլայնում են լրատվամիջոցների խոսքի ազատության իրավունքը եւ կարող են հիմք դառնալ նպաստավոր դատական պրակտիկայի ձեւավորման համար: Վերլուծելով Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իրավակիրառ պրակտիկան, ինչպես նաեւ այս գործերով ընդունված միջազգային փորձը, ուսումնասիրության հեղինակները նպատակ են հետապնդել ներդնել իրավական գործիքների հավաքածու, որոնց կիրառումը լրացուցիչ հնարավորություն կտա դատական համակարգին զրպարտության եւ վիրավորանքի գործերով փաստերը գնահատելիս օգտվել միջազգային պրակտիկայում ընդունված չափանիշներից եւ սկզբունքներից: Այս աշխատանքն օգտակար կլինի նաեւ լրատվամիջոցների ներկայացուցիչներին, ուսանողներին, որոնց ապագա պրոֆեսիոնալ գործունեությունը կարող է կապված լինել տեղեկատվական ոլորտի, նրանում ծագող վեճերի հետ:

Ուսումնասիրությունը բաժանված է 8 մասերի, եւ դրանցից յուրաքանչյուրն անդրադառնում է զրպարտության եւ վիրավորանքի ոլորտում ձեւավորված դատական պրակտիկայի ամենավիճահարույց խնդիրներին (*հանրային շահը եւ հանրային հետաքրքրությունը՝ խոսքի ազատության միջամտության իրավաչափության գնահատման չափանիշ, բարեխիղճ հայտարարության, ողջամիտ հրապարակման եւ այլ անձանց հայտարարությունների վերարտադրման պաշտպանության կառուցակարգեր, զրպարտության եւ վիրավորանքի կարգավորումը նոր մեդիայում, խոսքի ազատության իրավունքի փոխհավասարակշռումն այլ իրավունքների հետ, անձի պատվի, արժանապատվության եւ բարի համբավի վնասի փոխհատուցման չափի համաչափությունը, «տեղեկատվության աղբյուր» հասկացության սահմանումը եւ բնորոշումը, դատավարական նորմերի խախտումները զրպարտության եւ վիրավորանքի գործերով*), ինչպես նաեւ այս խնդիրների շուրջ արտահայտած միջազգային սկզբունքներին, մասնավորապես ՄԻԵԴ-ի դատական որշումներում: Հենց այս հարցերի շուրջ է, որ ՀՀ դատարանները սկզբնական փուլում դրսևորել են հակասական եւ միջազգային իրավունքի նորմերին չհամապատասխանող մոտեցումներ:

**ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԸ ԵՎ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ՝  
ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ**

**ՀՀ իրավական եւ դատական պրակտիկան**

Զրպարտության եւ վիրավորանքի գործերով դատական պրակտիկայում Հայաստանի դատարանները, հիմնվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի դրույթների վրա, յուրաքանչյուր գործով որպես փաստական հանգամանքների գնահատման հիմնական չափանիշ կիրառում են համընդհանուր երեք թեստերը (արդյո՞ք տեղեկատվությունը կրում է արատավորող բնույթ, արդյո՞ք առկա է արատավորելու նպատակ (դիտավորություն), արդյո՞ք տեղեկատվությունը տարածվել է հրապարակային ձևով): Որպես բացառություն այս կանոնից, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ վիրավորանք չի կարող համարվել այն հրապարակային հայտարարությունը, որը հիմնված է ստույգ փաստերի վրա, կամ պայմանավորված է գերակա հանրային շահով: Ինչ վերաբերում է զրպարտությանը, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոնշյալ հոդվածի միայն 5-րդ մասի 3-րդ կետն է անդրադառնում «գերակա հանրային շահին», նշելով, որ «փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե՝ դա տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները»:

Զրպարտության եւ վիրավորանքի գրեթե բոլոր գործերում դատարանները վկայակոչել եւ գնահատման առարկա են դարձրել տեղեկատվության «հանրային հետաքրքրությունը»: Սա միանշանակ բխում է ժողովրդավարական սկզբունքներից եւ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Եվրոպական դատարանը բազմիցս արձանագրել է, որ խոսքի ազատության սահմանափակումը պետք է գնահատվի ոչ միայն վերոնշյալ համընդհանուր թեստերով, այլ նաեւ յուրաքանչյուր գործով դատարանը պետք է գնահատի տեղեկության հանրային նշանակությունը, այն է՝ արդյո՞ք տվյալ հանգամանքների ներքո տեղեկատվություն տարածելու իրավունքի միջամտությունն անհրաժեշտ է եղել «ժողովրդավարական հասարակությունում». արդյո՞ք գանգատի առարկա միջամտությունը բխում է «հրատապ հասարակական կարիքից», արդյո՞ք միջամտության համար կիրառվել են «իրավաչափ նպատակին» հասնելու համար համաչափ եւ համարժեք միջոցներ, եւ արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները

«վերաբերելի են եւ բավարար» (տե՛ս ստորեւ՝ **Գրինբերգն ընդդէմ Ռուսաստանի ՄԻԵԴ որոշումը**):

Այնուամենայնիվ, ՀՀ դատարանների իրավակիրառ պրակտիկան այս խնդրի շուրջ միանման չէ, եւ եթէ որոշ դեպքերում դատարաններն ըստ էության քննել են տեղեկատվության «հանրային շահից» բխելու փաստը, ապա մի շարք գործերում ուղղակի վկայակոչել են այն՝ առանց կոնկրետ գործի հանգամանքների ներքո դրանք դիտարկելու:

**Սամվել Ալեքսանյանն ու այլոք ընդդէմ «Դարեսկիզբ» ՄՊԸ (ԵԿԴ/2347/02/10)** գործով Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որպէս այդպիսին քննության չի առել հանրային շահի առկայության հանգամանքը, այլ պարզապէս շեշտել է, որ «*խոսքի ազատության իրավունքը մշտապէս ուղեկցվում է պարտականություններով եւ պատասխանատվությամբ ...*», «*նույնիսկ եթէ քննարկման ենթակա հարցն ունի հանրային լուրջ հետաքրքրություն*»: Նույն գործով ՀՀ Քաղաքացիական վերաքննիչ ու Վճռաբեկ դատարանները, չնայած բողոքաբեր կողմի այն փաստարկների, որ «*թերեւս կասկած չի հարուցում այն, որ գերակա հանրային շահը թելադրում է հանրության իրազեկվածություն լուրջ հանցագործություններին՝ ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչների հնարավոր առնչություններին*», «**գերակա հանրային շահի**» առկայության փաստն ըստ էության առանձին քննության չեն ենթարկել եւ նույնությամբ կրկնել են ընդհանուր իրավասության դատարանի եզրահանգումը հանրային լուրջ հետաքրքրության մասին:

**Բելա եւ Սեդրակ Քոչարյաններն ընդդէմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ (ԵԿԴ/2479/02/10)** գործով դատարանը զուտ վկայակոչել է հանրային շահի մասին, սակայն չի դիտարկել այն կոնկրետ գործի փաստական հանգամանքների ներքո՝ համարելով, որ գործն իր փաստական հանգամանքներով «*էականորեն տարբերվում է քաղաքական գործչի նկատմամբ տեղեկատվության տարածման ավելի լայն ծավալի բնույթից, քանի որ տվյալ պարագայում խոսքը ոչ թէ քաղաքական գործչին է վերաբերում, այլ՝ ՀՀ Սահմանադրության 56.1 հոդվածով սահմանված անձեռնմխելիությամբ օժտված ՀՀ երկրորդ նախագահի ընտանիքի անդամներին ...*»:

Հանրային շահի թեսթի ըստ էության կիրառումը հայկական դատական պրակտիկայում թերեւս առաջին անգամ արձանագրվել է **Տիգրան Արզաքանցյանն ընդդէմ «Երկիր» խմբագրություն ՄՊԸ (ԵԿԴ/0261/02/11)** եւ **Տիգրան Արզաքանցյանն ընդդէմ «Իրավունք Մեդիա» ՄՊԸ (ԵԿԴ/0526/02/11)** գործերում, որոնցում դատարանը հաշվի է առել հայցվորի կարգավիճակը (վերջինիս քաղաքական գործիչ հանդիսանալու հանգամանքը) եւ ըստ այդմ էլ ճանաչել տարածված տեղեկատվության հանրային նշանակությունը: Առաջին դեպքում դատարանը նշել է, որ վիճարկվող «*հոդվածն ընդհանուր առմամբ վերաբերում է Ազգային ժողովի պատգամավորի վարքագծին, դրա տարբեր դրսևորումներին*», ուստի հաշվի է առել «*հայցվորի դիրքը հասարակությունում, նրա՝ ժողովրդի կողմից ընտրված լինելու հանգամանքը, նրա վարքագծի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում են հանրային հետաքրքրություն, եւ հանրությունն իրավունք ունի*

ստանալ նման տեղեկություններ»: Մյուս կողմից, դատարանը կարելուք է նաև այն հանգամանքը, որ «մամուլն ունի առանձնահատուկ դեր ժողովրդավարական հասարակությունում հանրային հնչեղություն ունեցող լուրերի մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում՝ այդպիսով միաժամանակ իրականացնելով նաև հանրային մարմինների նկատմամբ «հսկող շան» իր կարելուք դերը»: Այս առումով դատարանը փաստորեն կիրառել է ՄԻԵԴ նախադեպային իրավունքից բխող այն պահանջը, որ խոսքի ազատության սահմանփակման սահմանները որոշելիս անհրաժեշտ է նաև ելնել «ժողովրդավարական հասարակությունում» դրա անհրաժեշտությունից:

**Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՄՊԸ** գործում դատարանն առավել լայն մենկնաբանության է ենթարկել հանրային շահի հասկացությունը՝ այն դնելով անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հետ նույն նժարի վրա: Մասնավորապես, դատարանը եկել է այն եզրահանգման, որ «թեև անվիճելի է, որ անձնական կյանքի պաշտպանության իրավունք ունեն բոլորը, այդուհանդերձ, էական է այն հանգամանքը, թե արդյո՞ք լրատվական նյութը վերաբերել է մի անձի, ով շարունակում է պաշտոնավարել եւ իրականացնել պաշտոնեական գործառույթներ»: Դատարանը հանգել է այն եզրահանգման, որ «նման դեպքերում պաշտոնավարող քաղաքական գործիչները պետք է ակնկալեն անձնական կյանքի առավել նվազ պաշտպանություն, քանի որ նրանց յուրաքանչյուր գործ եւ խոսք գտնվում է հանրության ուշադրության կենտրոնում, եւ հանրությունը, ցանկանալով տեղեկացված լինել իր քաղաքական առաջնորդների մասին, իրականացնում է տեղեկություններ ստանալու իր իրավունքը, որն իրավաչափ շահ է»: Փաստորեն, դատարանը հանրության՝ տեղեկություն ստանալու իրավունքը գերադասել է մարդու անձնական կյանքի, տվյալ դեպքում՝ քաղաքական գործչի հեղինակության պաշտպանության իրավունքից, ինչը միանգամայն ողջունելի մոտեցում է:

Մեկ այլ գործով՝ **Հայկ Բաբուխանյանն ընդդեմ «Ժմբագիր» ՄՊԸ-ի եւ Էդիկ Անդրեասյանի (լրագրող-վերլուծաբան) եւ Աբել Միքայելյանի (լրագրող) (ԵԿԴ/0790/02/11)**, դատարանը արատավորող բնույթի չի համարել քաղաքական գործչի հասցեին ասված այնպիսի չափազանցություններ, ինչպիսին են, օրինակ, «բայց Հայկը որ գլուխ ունենար, թափ կտար ու իրա շներին կհրահանգեր ֆու, փոխարենն ականջներն է թափ տալիս եւ հիանում սեփական թերթից մեջբերվող ապուշությամբ: Դեռ ոչ մի հայ պատմաբան էս կարգի էշություն դուրս չի տվել, ինչպես Հայկը: Ու քանի որ միայն Հայկն ունի այս կարծիքը, ինքն էլ զբաղված է այն տարածելով: Մոռանալով, որ սա էն տեղը չի: Ասելիք ունեք հողվածի մասով՝ ասեք, թե չէ մնացածը հաչոց է, հողվածի հետ կապ չունեցող հաչոց»: Ուշագրավ է, որ տվյալ դեպքում դատարանն առաջնորդվել է ժողովրդավարական ինքնակարգավորման գաղափարի օբյեկտիվ պահանջից (սկզբունքից), համաձայն որի քաղաքական գործիչների նկատմամբ թույլատրելի քննադատության շրջանակները պետք է լինեն չափազանց լայն, իսկ վերջիները դրսևորեն ծայրահեղ հանդուրժողականություն, որի պարագայում, ըստ դատարանի, «հողվածում հրապարակված արտահայտություններն իրենց բնույթով անձր արատավորելու նպատակ չեն հետապնդել»: Անկասկած է, որ սովորական քաղաքացու հասցեին ասված նման խոսքերը կհամարվեին արատավորող բնույթի:



Ընդամին, հարկ ենք նշում առանձնացնել այս գործով կայացված դատական ակտից հետեւյալ մեջբերումը<sup>1</sup>. «Ավելին՝ հայցվոր քաղաքական գործչին՝ որպես այդպիսին, քննադատելու ընդունելի սահմանները շատ ավելի լայն են, հետեւաբար՝ վերջինս անխուսափելիորեն եւ գիտակցաբար իր արարքները կատարելիս գտնվում է ինչպես լրագրողների, այնպես էլ քաղաքացիների լայն զանգվածների ուշադիր հսկողության ներքո: Հետեւաբար, հայցվորն այս դեպքում եւս պետք է դրսևորեր ավելի մեծ հանդուրժողականություն, քանի որ ժողովրդավարական հասարակությունում դատարանի կողմից Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված ազատություններին միջամտելն այս դեպքում անհրաժեշտ չէ: Այսպես՝ ՀՀ Սահմանադրական դատարանը իր 15.11.2011թ. ՄԴՈ-997 որոշմամբ արձանագրել է, որ դատարանների կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը կիրառելիս *inter alia* պետք է հաշվի առնել ժողովրդավարական հասարակությունում հանրությանը հուզող խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու հարցում մամուլի առանցքային դերը՝ առավել լայն պաշտպանություն պետք է ապահովվի այն հրապարակումների համար, որոնք մաս են կազմում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցի շուրջ ծավալվող բանավեճի, ուստի քննվող գործով վերոհիշյալ դիրքորոշման լույսի ներքո դատարանի կողմից Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքին չմիջամտելու արդյունքում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրապարակված նյութն ու դրա շուրջ զետեղված կարծիքները հանդիսանում են բանավեճի արդյունք, ուստի հեղինակներն օժտված են ավելի լայն պաշտպանությամբ»:

Որքան ընդունելի է այս գործով դատարանի արտահայտած դիրքորոշումը ժողովրդավարական հասարակությունում մամուլի ունեցած հատուկ դերի եւ հանրային շահի բավական լայն մեկնաբանման առումով, նույնքան էլ անընդունելի է **Գեղարքունիքի մարզի մարզպետ Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի խմբագրություն ՄՊԸ (ԳՂ/0241/02/11)** գործով դատարանի դիրքորոշումը: Մասնավորապես, դատարանի այն փաստարկը, որ «գործի փաստերից հետեւում է, որ հայցվորը, իրականացնելով պետական կառավարումը մարզում, մինչ օրս դրսևորել է բարեխիղճ վարքագիծ, աշխատել է օրինական սկզբունքի սահմաններում, առավել եւս՝ կաշառք ստանալու որեւէ դեպք մինչ օրս չի արձանագրվել», դեռեւս չի նշանակում, որ հանրային պաշտոնյայի կողմից կոռուպցիայի հնարավոր դրսևորումը չի բխում հասարակական հետաքրքրությունից եւ տեղեկատվություն ստանալու հանրային գերակա շահից: Ավելին՝ լրատվամիջոցները, ելնելով հասարակությունում «հսկող շան» դերից, պարտավոր են հանրությանը տրամադրել նման տեղեկատվություն: Այս առումով, դատարանը ոչ միայն հաշվի չի առել պատասխանողի կողմից ներկայացված այս փաստարկը, այլեւ նշել է, որ «պատասխանողի կողմից հրապարակված տեղեկությունն այս դեպքում ուղղակի առումով «ճնշող հասարակական կարիքից» չի բխում, ինչի պարագայում «կաշառք է վերցրել» բնորոշման համար անպատիժ մնալն ինքնին չի կարող ժողովրդավարական հասարակության համար համարվել ընդունելի ու դրանով հանդերձ ծառայել օրինական նպատակի...»: Փաստորեն,

<sup>1</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Երավունքի գերակայություն» ՀԿ, 2012թ.

դատարանը հրաժարվել է ճանաչել, որ հանրային պաշտոնյայի կողմից կոռուպցիայի հնարավոր դրսևորման մասին տեղեկատվություն տարածելն ու ստանալը բխում են հասարակական հետաքրքրությունից ու հանրային գերակա շահից եւ արձանագրել է, որ դրա մասին տեղեկատվության տարածումը պետք է անպայման պատժվի: Ստացվում է, որ այս դեպքում դատարանն ի վնաս լրագրողի է մեկնաբանել «հանրային շահ» հասկացությունը՝ դրան տալով շատ հակասական իմաստ<sup>2</sup>:

2012 թվականի ապրիլի 27-ին *Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ (ԵԿԴ/2293/02/10)* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը (տե՛ս նաեւ *Վանո Եղիազարյանի ընդդեմ Բորիս Աշրաֆյանի, երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ, ԼԴ/0749/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 2012 թ. ապրիլի 27-ի որոշումը*) մանրագին կերպով անդրադարձել է «հանրային գերակա շահ» հասկացությանը, մասնավորապես՝ մամուլի «հանրային հսկող շան» դերին, քաղաքական կամ հանրությանը հետաքրքրող այլ հարցերի շուրջ ազատ բանավեճին եւ պաշտոնատար անձանց քննադատության սահմաններին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման, հետեւաբար եւ կարծիքի ազատ արտահայտման եւ տեղեկություններ տարածելու իրավունքի միջամտության ժամանակ դատարանները պետք է հաշվի առնեն, որ քաղաքական գործիչների, հանրային ծառայողների, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ քննադատության սահմաններն ավելի լայն են, քան մասնավոր անձանց դեպքում: Այդուհանդերձ, նման քննադատությունն ընդունելի կարող է համարվել, եթե այն արտահայտվել է վերջիններիս գործունեության առնչությամբ եւ չի գերազանցում Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված վերոնշյալ սահմանափակումները: Հակառակ դեպքում քաղաքական գործչի՝ որպես մասնավոր անձի վերաբերյալ քննադատության նկատմամբ ամբողջ ծավալով կիրառելի են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանափակումները, եւ հնչեցրած կարծիքը կամ տարածած տեղեկությունը որպես զրպարտություն գնահատելիս չպետք է հաշվի առնել անձի՝ պաշտոնատար անձ լինելու հանգամանք»: Անդրադառնալով «գերակա հանրային շահ» հասկացությանը, Վճռաբեկ դատարանը իրավացիորեն նշել է, որ յուրաքանչյուր գործով դատարանները ոչ միայն պետք է փաստական հանգամանքները գնահատեն ըստ համընդհանուր երեք թեսթերի (արդյո՞ք տեղեկատվությունը արատավորող է, արդյո՞ք առկա է արատավորելու նպատակ, արդյո՞ք տեղեկատվությունը տարածվել է հրապարակային ձևով), այլ նաեւ «յուրաքանչյուր դատական գործի քննության շրջանակներում անհրաժեշտ է պարզել՝ արդյո՞ք ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում եւ իրենց բովանդակությամբ բխել են «գերակա հանրային շահից», որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության տեղեկացված լինելու իրավունքի շահով, արդյո՞ք հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել, արդյո՞ք հասարակությունը հետեւել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին եւ

<sup>2</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Իրավունքի գերակայություն» ՀԿ, 2012թ.

սպասել է դրանց հետագա հրապարակմանը: **«Գերակա հանրային շահը»** գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների եւ հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում գաղափարների տարածման պարտականությունը: Զանգվածային լրատվության միջոցների այդ գործառույթին (պարտականությանը) զուգորդվում (համապատասխանում) է հասարակության կողմից տեղեկատվություն ստանալու իրավունքը»:

Միեւնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ «ի տարբերություն վիրավորանքի, երբ տեղեկատվության՝ գերակա հանրային շահով պայմանավորված լինելու հանգամանքի առկայությունը բացառում է տվյալ տեղեկատվությունը վիրավորանք համարելը, զրպարտության դեպքում անհրաժեշտ է լրացուցիչ փաստական կազմի առկայություն: Մասնավորապես՝ փաստացի տվյալներ հրապարակած անձը պետք է ապացուցի, որ մինչ հրապարակելը ձեռնարկել է այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն են ընձեռել վերջինիս հանգելու հետեւության այն մասին, որ փաստացի այդ տվյալները պայմանավորված են հանրային գերակա շահով եւ կարող էին համապատասխանել իրականությանը»: Այս տարբերակված մոտեցումը թերեւս հիմնավորված չէ եւ նեղացնում է լրագրողների պաշտպանվածության շրջանակը զրպարտության գործերով՝ պատառելով լրագրողներին լրացուցիչ միջոցներ ձեռնարկել զրպարտող արտահայտության գերակա հանրային շահով պայմանավորված լինելն ապացուցելու համար:

Անդրադառնալով քաղաքական գործիչների քննադատության սահմաններին՝ Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան, նշել է, որ «քաղաքական գործիչների նկատմամբ ընդունելի քննադատության սահմանները, հետեւաբար, ավելի լայն են, քան մասնավոր անձանց պարագայում»: (տե՛ս ստորեւ **Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի հուլիսի 8-ի վճիռը, կետ 42**):

Ավելի վաղ այս խնդրի շուրջ նմանատիպ դիրքորոշում էր արտահայտել նաեւ Սահմանադրական դատարանը իր **2011 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-997** որոշման մեջ. անդրադառնալով «... **«գերակա հանրային շահ»**, ինչպես նաեւ տվյալների «հավասարակշռված եւ բարեխղճորեն ներկայացում» եզրույթների իրավական որոշակիության խնդրին՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, կախված գործի հանգամանքներից, պետք է որոշվի, թե արդյո՞ք հասարակության տեղեկացված լինելու շահը գերակա է եղել տեղեկություն հայտնած անձի վրա դրված պարտականության ու պատասխանատվության համեմատ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ այսպիսի դեպքերում ազգային իշխանությունների հայեցողության շրջանակը սահմանափակված է ժողովրդավարական հասարակության շահով, որը կայանում է նրանում, որ մամուլին թույլատրվի կատարել «հասարակական վերահսկող օղակի» (“watchdog”) իր գործառույթը եւ տեղեկատվություն տարածել հասարակական հետաքրքրություն ներկայացնող լուրջ հարցերի վերաբերյալ: Ըստ այդ դատարանի

դիրքորոշման՝ իրավակիրառական պրակտիկայում առաջին հերթին պետք է գնահատվի այնպիսի «անհետաձգելի հասարակական պահանջի» առկայության փաստը, որն ունակ է արդարացնել այդ միջամտությունը հավասարակշռված եւ բարեխղճորեն՝ առանց չարամիտ, անձին անվանարկող դիտավորության»:

## Միջազգային իրավական պրակտիկան եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Հանրային շահի եւ քաղաքական գործիչների քննադատության սահմանները վերլուծելիս ՀՀ դատարաններն առավել հաճախ հղում են կատարել **Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի հուլիսի 8-ի** գործով ՄԻԵԴ-ի նախադեպային որոշմանը: Այս որոշման 42-րդ կետում ՄԻԵԴ-ը սահմանել է, որ «հասարակության համար մամուլի ազատությունը քաղաքական գործիչների գաղափարների եւ վարքի մասին իմանալու եւ կարծիք կազմելու ամենալավ ձևերից մեկն է: Մասնավորապես, ազատ քաղաքական բանավեճը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության հիմնասյուններից, որը գերակա է Կոնվենցիայի համար: Հետեւաբար, քաղաքական գործիչների նկատմամբ քննադատության սահմաններն առավել լայն են, քան մասնավոր անձի նկատմամբ: Ի հակառակ վերջիններիս, քաղաքական գործիչների ցանկացած խոսք եւ գործունեություն անխուսափելիորեն եւ գիտակցաբար ենթարկվում է թե լրագրողների եւ թե լայն հասարակության վերահսկողությանը, հետեւաբար քաղաքական գործիչները պետք է ավելի հանդուրժողական լինեն: Անկասկած է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը թույլ է տալիս պաշտպանել այլոց, այսինքն՝ բոլոր անհատների հեղինակությունը, եւ այս պաշտպանությունը տարածվում է քաղաքական գործիչների նկատմամբ եւս, եթե նույնիսկ նրանք հանդես չեն գալիս իրենց մասնավոր կարգավիճակում, սակայն նման դեպքերում այդպիսի պաշտպանության պահանջները պետք է կշեռքի նժարին դնել՝ մյուս նժարին դնելով քաղաքական հարցերը բաց կերպով քննարկելու շահերը:» Ընդամին, ՄԻԵԴ-ը սույն որոշմամբ արձանագրել է, որ ելնելով ժողովրդավարական հասարակության պահանջներից, դատարանները պետք է առավել հանդուրժողական լինեն քաղաքական գործիչների մասին լրագրողների տարածած տեղեկությունների նկատմամբ, եւ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքները անհրաժեշտաբար պետք է վերլուծեն «գերակա հանրային շահի» տեսանկյունից:

Եվս մեկ գործ, որին առավել հաճախ են անդրադառնում ՀՀ դատարանները՝ **Կաստելան ընդդեմ Իսպանիայի (1992 թվականի ապրիլի 23-ի վճիռ)**: Այս գործով դատարանը հիշեցրել է իրավական պետությունում մամուլի ունեցած նշանակալի դերի մասին: ՄԻԵԴ-ը կրկին նշել է, որ մամուլն ունի կարեւոր դեր քաղաքական եւ հանրային հետաքրքրության այլ հարցերով տեղեկություններ եւ գաղափարներ տարածելու մեջ, իհարկե՝ եթե այն չի խախտում Կոնվենցիայով նախատեսված թույլատրելի սահմանները: Նույն գործում դատարանը մեջբերել է **Լինգենսն**

**ընդդեմ Ավստրիայի** գործով իր կայացրած դիրքորոշումն առ այն, որ քաղաքական գործիչների նկատմամբ քննադատության սահմաններն առավել լայն են, իսկ քաղաքական բանավեճը ժողովրդավարական հասարակության առանցքն է կազմում:

**«Մանդեյ Թայմսն» ընդդեմ Մեծ Բրիտանիայի (1979 թվականի ապրիլի 26)** գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է հաշվի առնել, թե արդյո՞ք խոսքի ազատության սահմանափակումը *«անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»*, այսինքն՝ գործի փաստական հանգամանքները պետք է գնահատվեն հանրային հետաքրքրության տեսանկյունից: Դեղորայքների աղետի մասին տեղեկությունը դատարանը գնահատել է որպես հանրային մտահոգության առարկա եւ անընդունելի է համարել դրա մասին տեղեկությունների տարածման սահմանափակումը: Այս առնչությամբ դատարանը հիշատակել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը **ոչ միայն երաշխավորում է մամուլի ազատությունը, այլ նաեւ հանրության՝ պատշաճ տեղեկություններ ստանալու իրավունքը:**

**Standard Verlags GmbH-ն ընդդեմ Ավստրիայի (2009 թվականի հունիսի 4)** գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից է, դրա զարգացման, անձի ինքնաբավարարման հիմնական պայմաններից մեկը եւ կրկին ընդգծել է մամուլի նշանակալի դերը ժողովրդավարական հասարակությունում: Դատարանը նաեւ նշել է, որ խոսքի ազատության սահմանափակման իրավաչափությունը գնահատելիս դատարանները պետք է հաշվի առնեն ժողովրդավարական հասարակության շահերը եւ դրանում մամուլի ունեցած **«հանրային հսկող շան»** գործառույթը: ՄԻԵԴ-ը նաեւ մի կարեւոր դիրքորոշում է արտահայտել, որը հայաստանյան դատական պրակտիկայում դատարանը հաշվի է առել միայն մեկ գործով՝ **Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ (ԵԿԴ/0526/02/11)**: ՄԻԵԴ-ն ընդգծել է, որ պետք է **հիմնովին տարբերակել** իրենց լիազորությունների իրականացման ընթացքում **քաղաքական գործիչների մասին այնպիսի տեղեկությունների տարածումը**, որոնք նպաստում են ժողովրդավարական հասարակությունում քաղաքական բանավեճի ձեւավորմանը (նույնիսկ եթե այդ տեղեկությունները վիճելի են) **մասնավոր անձանց կյանքի մասին այն տեղեկություններից**, որոնք չեն վերաբերում քաղաքական գործիչների կամ հանրային պաշտոնյաների կողմից իրենց պաշտոնեական գործառույթների իրականացմանը: Ավելին, այս գործով դատարանը նշել է, որ *հանրության տեղեկացված լինելու իրավունքը կարող է որոշ առանձնահատուկ հանգամանքների ներքո տարածվել նաեւ հանրային դեմքերի անձնական կյանքի հատկանիշների վրա՝ հատկապես քաղաքական գործիչների առումով:*

**Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի (2005 թվականի հուլիսի 21)** գործով ՄԻԵԴ-ը իր որոշման 27-րդ կետում պարզաբանել է **«ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության»** թեսթը, նշելով, որ դատարանները պետք է գնահատեն, թե արդյո՞ք խոսքի ազատության սահմանափակումը ելնում է **«հրատապ հասարակական կարիքից»**, արդյո՞ք այն համաչափ է իր առջեւ դրված **«իրավաչափ նպատակին»**, եւ արդյո՞ք իշխանությունների կողմից միջամտության

արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի են եւ բավարար»:

Փաստորեն, պետք է գոհունակությամբ նշել, որ թեպետ ՀՀ դատարանները ոչ միշտ են ըստ էության կիրառել հանրային գերակա շահով պայմանավորված տեղեկություններ տարածելու համար պատասխանատվությունից ազատելու միջոցները, այնուամենայնիվ, հետագա դատական պրակտիկան եւ, մասնավորապես, 2012 թվականի ապրիլի 27-ի Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները ու Սահմանադրական դատարանի պարզաբանումները միանշանակ համապատասխանում են ՄԻԵԴ նախադեպային իրավունքին ու բխում են միջազգայնորեն ճանաչված չափանիշներից: Վերջիններս դրական կերպով են անդրադարձել նաեւ հետագա՝ 2012 թվականի դատական պրակտիկայի վրա, քանի որ դատարանների կայացրած գրեթե բոլոր վճիռներն առնվազն անդրադարձել են գերակա շահի թեսթին՝ հիմնականում վկայակոչելով Վճռաբեկ եւ Սահմանադրական դատարանների որոշումները:

**ԲԱՐԵՆԻՂՃ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ,  
ՈՂՋԱՄԻՏ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ  
ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐ**

**ՀՀ իրավական եւ դատական պրակտիկան**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքն իր 1087.1 հոդվածում անդրադառնում է «Բարեխիղճ հայտարարության», «ողջամիտ հրապարակման» եւ այլ անձանց հայտարարությունների վերաբրտադրման միջազգայնորեն ընդունված պաշտպանության համակարգերին:

**«Բարեխիղճ հայտարարության»** սկզբունքի արտահայտված է օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 5-րդ մասերում: Ըստ հոդվածի 2-րդ մասի՝ վիրավորանք չի կարող համարվել այն հրապարակային հայտարարությունը, որը չի տարածվել անձին «արատավորելու նպատակով», կամ հիմնված է ստույգ փաստերի վրա, կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զրպարտությունը անձին արատավորող փաստացի հայտարարություն է, իսկ 5-րդ մասի համաձայն՝ անձն ազատվում է նման հայտարարություն կատարելու համար պատասխանատվությունից, եթե այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից, կամ նրանցից ելնող փաստաթղթից, կամ էլ հայտարարությունը պայմանավորված է գերակա հանրային շահով, կամ էլ եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները: **«Ողջամիտ հրապարակում»** պաշտպանությունը «բարեխիղճ հրապարակում» պաշտպանության դրսեւորման առանձնահատուկ եղանակներից մեկն է<sup>3</sup>, եւ դրա մեկնաբանությունը տրված է 1087.1 հոդվածի վերոնշյալ 5-րդ մասում:

Այլ անձանց հայտարարությունների վերաբրտադրման սկզբունքն ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ կետում, ըստ որի՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաեւ այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի,

<sup>3</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2011թ. հոկտեմբերի 20-ի եզրակացությունը ՀՀ ԱԺ պատգամավորներ Մամվել Ալեքսանյանը (անկուսակցական), Լևոն Սարգսյանը եւ Ռուբեն Հայրապետյանը (Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության անդամներ)՝ ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Դարեակիզբ» ՄՊԸ հայցի վերաբերյալ

լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

2010 թվականին գրապարտության եւ վիրավորանքի ապաքրեականացումից ի վեր ՀՀ դատարանները քիչ են կիրառել պաշտպանության վերոնշյալ համակարգերը: Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 15-ի եւ Վճռաբեկ դատարանի 2012 թ. ապրիլի 27-ի նախադեպային որոշումներից հետո, եւ էլնելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքից, դատարաններն սկսեցին առավել հաճախ անդրադառնալ լրագրողների պաշտպանության այս եղանակներին:

*Սամվել Ալեքսանյանն ու այլոք ընդդեմ «Դարեակիզը» ՄՊԸ (ԵԿԴ/2347/02/10)* գործով, որի վերաբերյալ, ըստ էության, վճիռը կայացվել է մինչ վերոնշյալ որոշումների ընդունումը, դատարանը, ունենալով համապատասխան հիմքեր պաշտպանության վերոնշյալ երեք եղանակների կիրառման համար, այնուամենայնիվ, չի արել դա՝ ենթարկելով լրատվամիջոցին պատասխանատվության ամենաբարձր շեմին: Դատարանը հաշվի չի առել տվյալ գործով լրագրողի եւ թերթի դրսևտրած գործողությունները, որոնք կարող էին գնահատվել որպես «բարեխիղճ»: Այսպես, լրատվամիջոցը բացահայտել էր իր աղբյուրը, ինչը վկայում է լրագրողական բարեխիղճության դրսևտրման, լրատվամիջոցի կողմից իր աղբյուրի նկատմամբ վստահության առկայության, ակնհայտ չարամտության (actual malice) բացակայության եւ լրատվամիջոցի կողմից գրապարտված անձանց՝ իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորություն ընձեռելու մասին: Նման հնարավորություն ընձեռելու մասին է խոսում նաեւ խմբագրության 01/11/2010 նամակը հայցվորներին, որով լրատվամիջոցը պատրաստակամություն է հայտնել «*օրենքով նախատեսված կարգով քննարկել... պատասխանի տեքստի տարածման հարցը...*»:

Սույն գործով դատարանները չեն կիրառել նաեւ «**ողջամիտ հրապարակման**» պաշտպանության համակարգը, որի տարրերը մասամբ համընկնում են «**բարեխիղճ հայտարարության**» հետ: Ողջամիտ հրապարակման առաջին պարտադիր տարրը հրապարակման հանրային հետաքրքրությունն է: Ակնհայտ է, որ վիճահարույց հրապարակումը ներկայացրել է հանրային հետաքրքրություն (այն անդրադառնում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների՝ որոշ հանցագործություններում հնարավոր մասնակցության մասին): Միեւնույն ժամանակ, լրատվամիջոցը տեղեկատվական նյութը ներկայացրել է հավասարակշռված եւ բարեխիղճ կերպով՝ ձեռնպահ մնալով անմեղության կանխավարկածը խախտող բնույթի հայտարարություն կատարելուց, բացի այդ՝ ողջամտության սահմաններում ձեռնարկել է բավարար միջոցներ՝ պարզելու համար փաստերի ճշմարտացիությունը, նախաձեռնել է Սմբատ Կարախանյանի (ինֆորմացիայի աղբյուրի) հետ ընդհարձակ հարցազրույցը <sup>4</sup>:

<sup>4</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2011թ. հոկտեմբերի 20-ի եզրակացությունը ՀՀ ԱԺ պատգամավորներ Սամվել Ալեքսանյանը (անկուսակցական), Լեւոն Սարգսյանը եւ Ռուբեն Հայրապետյանը (Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության անդամներ)՝ ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Դարեակիզը» ՄՊԸ-ի հայցի վերաբերյալ



Նմանատիպ մեկ այլ գործով, որտեղ որպես հայցվոր կրկին հանդես է գալիս ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, այս դեպքում՝ Տիգրան Արզաքանցյանը, դատարանը հաշվի է առել լրագրողի եւ լրատվամիջոցի կողմից ձեռնարկված ողջամիտ գործողությունները, փաստորեն կիրառելով պաշտպանության ընդունված կառուցակարգերը: ***Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ (ԵԿԴ/0261/02/11)*** գործով դատարանը մանրագնին անդրադարձել է յուրաքանչյուր վիճարկվող արտահայտությանը եւ միայն մեկի դեպքում չի կիրառել վերոնշյալ պաշտպանական համակարգերը: Այսպես, առաջին ատյանի դատարանն իրավացիորեն նշել է, որ «լակոտ» բառի համար *«լրատվամիջոցը պատասխանատվություն չէր կրի ... այն դեպքում, եթե հիմնավորեր, որ նշված արտահայտությունը կատարվել էր այլ անձի կողմից, եւ որ լրագրողը զուտ վկայակոչել է այդ արտահայտությունը՝ իրեն բավարար կերպով հեռու պահելով որպես այդ արտահայտությունն իր սեփականը լինելուց»:* Մինչդեռ, որպես այդ արտահայտության աղբյուր լրատվամիջոցը վկայակոչել էր Հրանտ Բագրատյանին, ով ներկայացրել էր ստորագրությամբ գրավոր հայտարարություն եւ հերքել էր իր կողմից նման հայտարարություն կատարած լինելու փաստը: Ուստի դատարանը բխեցրել է, որ լրագրողը *«լրատվանյութը պատրաստելիս չի դրսևորվել պատշաճ բարեխղճություն եւ ջանասիրություն վիճահարույց արտահայտությունը Հրանտ Բագրատյանի կողմից հնչեցնելու փաստը ճշտելու համար»:*

***«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ (ԵԿԴ/1963/02/10)*** գործով դատարանը գտել է, որ *«առանձին քաղաքացիների՝ ձայնագրություններում արված արտահայտությունները որեւէ ապացուցողական նշանակություն չունեն եւ, հետեւաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերաբերելի չեն, եւ դատարանը հանում է այն ապացույցների կազմից»:* Այս դեպքում, փաստորեն, դատարանը հրաժարվել է դիտարկել այն հանգամանքը, որ վիճարկվող փաստերի ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը ապացուցելու համար լրատվամիջոցը ներկայացրել է վերոհիշյալ ձայնագրությունները: Դատարանի կողմից դրանց ուսումնասիրությունը թույլ կտար պարզել, թե արդյո՞ք լրագրողն ունեցել է զրպարտելու չարամիտ մտադրություն, արդյո՞ք լրագրողի կողմից ձեռնարկված միջոցները ողջամիտ են, եւ, հետեւաբար, հնարավո՞ր էր, արդյո՞ք, կիրառել ***«բարեխիղճ հայտարարության»*** եւ ***«ողջամիտ հրապարակման»*** կառուցակարգերը: ***«Ողջամիտ հրապարակման»*** սկզբունքի կիրառման համար դատարանը կարող էր նաեւ դիտարկել այն հանգամանքը, որ Գյումրի քաղաքի «Մուշ-2» թաղամասում տեղի ունեցած շենքի փլուզման դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հանրային նշանակություն ունենալ, ինչը սակայն նա չի արել<sup>5</sup>:

Պատասխանողի ներկայացրած ձայնագրությունները որպես ապացույց դիտարկելու մերժման մասին դատարանի որոշումը, որը կայացվել է 2012թ. հունվարի 20-ին, թերեւս կհակասեր ՀՀ Վճռաբեկ դատարանի ավելի ուշ կայացրած՝ ***2012 թվականի ապրիլի 27-ին, Վանո Եղիազարյանն ընդդեմ Բորիս***

<sup>5</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2012թ. հուլիսի 26-ի եզրակացությունը՝ ***«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ*** հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ

*Աշրաֆյանի (երրորդ անձ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ-ի ԼԴ/0749/02/10 գործով)* նախադեպային որոշմանը, ըստ որի Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «դատական գործեր քննելիս դատարանները մեծ ուշադրություն պետք է դարձնեն հրապարակայնորեն փաստացի տվյալներ ներկայացրած անձի բացատրություններին, մոտեցումներին, իր կողմից ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ վերաբերմունքին՝ պարզելու նպատակով՝ արդյո՞ք անձը ներկայացված փաստերով դիտավորություն ունեցել է արատավորելու որեւէ մեկին, թե՞ օբյեկտիվորեն արտահայտել է իր գնահատող դատողությունները՝ միաժամանակ դրսևորելով բարեխիղճ մոտեցում:» Մինչդեռ, **«Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՄՊԸ** վերոհիշյալ գործով առաջին աստիճանի դատարանը համարել է որ «առանձին քաղաքացիների՝ ձայնագրություններում արված արտահայտությունները որեւէ ապացուցողական նշանակություն չունեն»: Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումից հետո **«Գլենդել Հիլզ» ՓԲԸ** գործը քննվել է Վերաքննիչ դատարանում, սակայն, հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության 219 հոդվածով նախատեսված վերաքննության սահմանները, Վերաքննիչ դատարանն այլևս չէր կարող որեւէ նոր ապացույց ուսումնասիրել:

Հարկ է նշել, սակայն, որ նույնիսկ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ, ինչպես նաև **Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՄՊԸ (ԵԿԴ/2293/02/10) գործով** նախադեպային որոշումներից հետո դատարանները որոշ դեպքերում հաշվի չեն առել պատասխանատվությունից ազատվելու քննարկվող պաշտպանական համակարգերը: Այսպես, օրինակ, **Գեղարքունիքի մարզի մարզպետ Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի խմբագրություն ՄՊԸ (ԳԴ/0241/02/11)** գործով չի կիրառվել «բարեխիղճ հրապարակում» եւ «այլ անձանց հայտարարությունների վերարտադրում» պաշտպանությունը: Մասնավորապես, տվյալ վեճում «Ժողովուրդ» օրաթերթը բառացիորեն վերարտադրել էր տեղեկատվության աղբյուրի՝ ուսուցիչ Աննա Թորոսյանի հետ հարցազրույցի տեքստը: Մա հաստատվել էր նաև վերջինիս կողմից դատարանում որպես վկա տված ցուցմունքով: Աննա Թորոսյանը ֆիզիկական անձ է, ով տեղեկատվության «հեղինակն» է՝ ըստ Թաթուլ Մանասերյանի գործով Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի: Ըստ այդմ էլ նշված անձը տեղեկատվության պատշաճ աղբյուր է, եւ, հետևաբար, թերթը բարեխիղճ վերարտադրող է եւ պետք է օգտվեր ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի եւ 5-րդ մասի 2-րդ կետի դրույթներով եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով նախատեսված պաշտպանությունից<sup>6</sup>: Ընդ որում, ըստ նույն Վճռաբեկ դատարանի որոշման՝ «այն դեպքում, երբ հղում է կատարված տեղեկատվության աղբյուրին, սակայն նույն աղբյուրում տեղ գտած տեղեկատվությունը հրապարակված չէ բառացի կամ բարեխիղճ, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), ապա հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից»: Այնուամենայնիվ, տվյալ գործի փաստական հանգամանքներից պարզ է դառնում, եւ

<sup>6</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2012թ. հոկտեմբերի 26-ի եզրակացությունը **Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ օրաթերթի խմբագրություն» ՄՊԸ** հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ

սա նաեւ հաստատել է հենց ինքը՝ հեղինակը, որ թերթն իր խոսքերը շարադրել է բառացիորեն: Ավելին, գործում առկա են նաեւ բարեխիղճ հայտարարության եւ ողջամիտ հրապարակման պաշտպանության միջոցի այլ տարրեր, ինչպէս, օրինակ, գործի հանրային նշանակությունը (այս դեպքում՝ իր պաշտոնական լիազորությունների իրականացման ընթացքում հանրային պաշտոնյայի հնարավոր կոռուպցիայի դրսևորումը միանգամայն հանրային հետաքրքրություն առաջացնող թեմա է) եւ ողջամտության սահմաններում լրատվամիջոցի ձեռնարկած գործողությունները՝ տեղեկատվության ճշմարտացիությունն ապացուցելու համար (Աննա Թորոսյանից տեսակետի ներկայացումը, մարզպետից եւ մարզպետարանի լրատվական բաժնից ստացված տեղեկատվությունը, մեկնաբանությունները եւ դրանց պատշաճ ու բառացի ներկայացումը հողվածում):

Մեկ այլ գործով՝ *Մարգարիտա Խաչատրյանն ընդդէմ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ (ԵԿԴ/0807/02/11)*, առաջին ատյանի դատարանը կիրառել է հանրաճանաչ պաշտպանության միջոցները, ինչը, մեր կարծիքով, այս դեպքում տեղին չէր: Նկատի առնելով վիճահարույց հողվածում գրպարտող տեղեկատվությանը զուգահեռ Մարգարիտա Խաչատրյանի հերքման տեքստի ամբողջական հրապարակումը, դատարանն արձանագրել է. «լրագրողը գործել է բարեխիղճորեն, մասնավորապէս՝ լսելով եւ նույն հողվածում հրապարակելով շահագրգիռ անձի դիրքորոշումը հրապարակվող տեղեկությունների վերաբերյալ՝ ըստ էության հերքել է հողվածի առաջին մասում ներկայացված տեղեկությունները: Դրանից հետեւում է, որ լրագրողը վիճարկվող նյութն այնպէս է հրապարակել, որ ընթերցողի (կողմնակի դիտորդի) մոտ այն միանշանակորեն չի ստեղծում այնպիսի համոզմունք կամ տպավորություն, որ հողվածում նշված միջադէպն իրականում տեղի է ունեցել, կամ որ Մարգարիտա Խաչատրյանն հանդէս է եկել կոպիտ վարքագծով՝ վիճաբանել է եւ հայհոյել: Նշվածի վերլուծության արդյունքում դատարանը գտավ, որ հողվածը հրապարակելիս լրագրողն ըստ էության ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու հրապարակված փաստացի տվյալների ճշմարտացիությունը եւ հիմնավորվածությունը, այսինքն՝ նա ի սկզբանէ Մարգարիտա Խաչատրյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավն արատավորելու, դրանց վնաս պատճառելու ինչպէս նպատակ, այնպէս էլ դիտավորություն չի ունեցել, հետեւաբար՝ նա ենթակա չէ պատասխանատվության գրպարտություն համարվող տեղեկություններ տարածելու համար:»

Սակայն հարկ է նշել, որ հողվածում հայցվոր Մարգարիտա Խաչատրյանի մերժողական տեսակետի հրապարակումը, որը դատարանը համարել է պատշաճ հերքում, չի կարող «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հողվածի առաջին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված պատշաճ հերքման տեքստ հանդիսանալ, ուստի եւ չէր կարող դատարանի կողմից ճանաչվել որպէս թերթի կողմից ձեռնարկված ողջամիտ գործողություն, ըստ այդմ էլ ազատելով նրան որեւէ պատասխանատվությունից<sup>7</sup>: Բանն այն է, որ տվյալ դեպքում պատասխանող լրատվամիջոցը վիճարկվող հողվածում պարզապէս հրապարակել

<sup>7</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2012թ. հոկտեմբերի 15-ի եզրակացությունը *Մարգարիտա Աղվանի Խաչատրյանն ընդդէմ «Հրապարակ» օրաթերթի* դատական հայցի վերաբերյալ

Է իր կողմից տարածված տեղեկատվության վերաբերյալ հայցվորի մերժողական դիրքորոշումը, ինչը չի կարող համարվել պատշաճ հերքում, քանի որ այն հրապարակվել է տարածված տեղեկատվության հետ միաժամանակ եւ չի համապատասխանում օրենքով նախատեսված ձևին: Բացի այդ, ինչպես նշվել է Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացության մեջ, որեւէ անձի վերաբերյալ տեղեկատվության եւ միաժամանակ նույն անձի մերժողական դիրքորոշման (կարծիքի) հրապարակումը (տարածումը) չի կարող լրատվական գործունեություն իրականացնողին ազատել օրենքով նախատեսված կարգով պատշաճ հերքում հրապարակելու պարտականությունից:

2012 թվականի նոյեմբերի 23-ին Վերաքննիչ դատարանն այս գործով կայացրել է վճիռ, որում չի համաձայնվել առաջին աստիճանի վերոնշյալ դիրքորոշման հետ, արձանագրելով, որ «...այն հանգամանքը, որ նույն հոդվածի երկրորդ մասում շարադրված է նաև Մարգարիտա Խաչատրյանի դիրքորոշումը հրապարակված նյութի վերաբերյալ, որով վերջինս հայտնել է, որ հոդվածում նշվածն իրականությանը չի համապատասխանում, դեռևս բավարար չէ հայցի մերժման համար: Ավելին՝ հայցի մերժման հիմք չի կարող հանդիսանալ նաև նյութը հրապարակած լրագրողի կամարտահայտությունը, նրա նպատակը, ուստի դատարանի դիրքորոշումն առ այն, որ լրագրողն ի սկզբանե Մարգարիտա Խաչատրյանի պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորելու կամ դրանց վնաս պատճառելու թե նպատակ եւ թե դիտավորություն չի ունեցել, դեռևս հիմք չէ վերջինիս քաղաքացիաիրավական պատասխանատվությունից ազատելու համար:» Հենց այս հիմքով էլ Վերաքննիչ դատարանը բավարարել է Մարգարիտա Խաչատրյանի բողոքը, պարտավորեցնելով թերթին տպագրել նրան վերաբերող հոդվածի հերքումը եւ ներողություն խնդրել նրանից: Թեպետ Վերաքննիչ դատարանի այս դիրքորոշումը միանգամայն ընդունելի է, այնուամենայնիվ՝ նույն որոշման մեջ դատարանը հանգել է մի եզրակացության, որը, մեր կարծիքով, անընդունելի է: Այսպես, դատարանն արձանագրել է. «...ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի տարածական մեկնաբանությունից բխում է, որ անձը ենթակա է քաղաքացիաիրավական պատասխանատվության բոլոր այն դեպքերում, երբ վերջինիս տարածած տեղեկություններն իրենց բնույթով զրպարտություն են, այսինքն՝ չեն համապատասխանում իրականությանն ու արատավորում են քաղաքացիական իրավահարաբերության որեւէ սուբյեկտի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Օրենսդիրը զրպարտության որակման հարցում չի կարեւորել այն տարածած անձի սուբյեկտիվ մոտեցումը, մասնավորապես՝ նրա նպատակն ու դիտավորությունը:» Այս դիրքորոշումը միանգամայն հակասում է **Սահմանադրական դատարանի 2011թ. նոյեմբերի 11-ի** որոշմանը, որում ՄԴ-ն ուղղակիորեն նշել է. «անձն ազատվում է **զրպարտություն համարվող տեղեկատվություն տարածելու համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխղճորեն՝ առանց տուժողի հեղինակությանն ու պատվին վնաս պատճառելու դիտավորության:**» Բացի այդ, ինչպես ստորեւ կներկայացվի, «բարեխիղճ հայտարարության» եւ «ողջամիտ հրապարակման» կառուցակարգերի հիմնական տարրերից մեկը լրագրողի չարամիտ մտադրության բացակայությունն է, եւ միջազգային պրակտիկայում դրանք կիրառվում են ոչ միայն վիրավորանքի, այլ նաև զրպարտության գործերով:

## Միջազգային իրավական պրակտիկան եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Ողջամիտ հրապարակման, բարեխիղճ հայտարարության եւ այլ անձանց հայտարարությունների վերաբարձողության պաշտպանական միջոցները լայնորեն ճանաչված են ինչպես ՄԻԵԴ-ի, այնպես էլ ընդհանրապես միջազգային պրակտիկայում, ուստի ՀՀ դատարանները յուրաքանչյուր գործի հանգամանքներով պետք է միջոցներ ձեռնարկեն այդ սկզբունքները կիրառելու համար, եթե, իհարկե, դրանց տարրերն առկա են կոնկրետ գործում:

*Բարեխիղճ հայտարարության* պաշտպանությունը կիրառվում է բազմաթիվ երկրների ներպետական իրավունքում, ինչպես նաեւ եվրոպական դատարանի կողմից: Միացյալ Նահանգներում նշված տեսությունը բնորոշվում է «բարեխիղճ մեկնաբանություն» կամ «բարեխիղճ կարծիք» (fair comment) եզրույթով, որի իրավական սահմանումը հետեւյալն է՝ «ընդհանուր իրավունքում կիրառվող պաշտպանական [կառուցակարգ] է, որը երաշխավորում է հանրային հնչեղություն ունեցող դեպքերի վերաբերյալ հայտարարություններ կատարելու մամուլի ազատությունը, եթե այդ հայտարարությունները չեն կատարվել չարամտորեն կամ հայցվորին վնաս պատճառելու մտադրությամբ»: Այս սահմանումն ընդունվել է «Նյու Յորք Թայմս» ընդդեմ Սալիվանի գործով ԱՄՆ Գերագույն դատարանի հայտնի որոշման մեջ, որի կարեւորությունը կայանում է նրանում, որ դրանում ընդգրկվեց «ակնհայտ չարամտության» չափորոշիչը, ըստ որի հայտարարության իրականությանը չհամապատասխանելը դեռ բավարար պայման չէ լրատվամիջոցին պատասխանատվության ենթարկելու համար (նախկինում դա ինքնին բավարար պայման էր հանդիսանում), եւ հայցվորը պետք է նաեւ ապացուցի, որ իրականությանը չհամապատասխանող փաստացի հայտարարություն կատարելիս լրագրողը հետապնդել է ակնհայտորեն չարամիտ նպատակ (actual malice): Չարամիտ մտադրության առկայությունն ապացուցելու պարտականությունը գործում է միայն այն դեպքում, եթե լրատվանյութը վերաբերում է «հանրային պաշտոնյային», «հանրային դեմքին» կամ «հանրային հնչեղություն ունեցող իրադարձության»<sup>8</sup>:

«Արտիկլ 19» իրավապաշտպան կազմակերպության «Զրպարտության սահմանումը» ուսումնասիրության 11-րդ սկզբունքն անդրադառնում է «բարեխիղճ հայտարարության» սկզբունքին, այն դասելով լրագրողների պատասխանատվության միջոցներից ազատվելու մեխանիզմների թվին: Ըստ այդ սկզբունքի՝ *որոշ հայտարարությունների համար անձը կարող է ազատվել պատասխանատվությունից, եթե ապացուցվի, որ դրանք արված չեն դիտավորությամբ, այն է՝ չեն հետապնդել չարամիտ նպատակ (ill-will or spite).*

<sup>8</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2011թ. հոկտեմբերի 20-ի եզրակացությունը ՀՀ ԱԺ պատգամավորներ Սամվել Ալեքսանյանը (անկուսակցական), Լեւոն Մարգարյանը եւ Ռուբեն Հայրապետյանը (Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության անդամներ)՝ ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Դարեսկիզբ» ՄՊԸ հայցի վերաբերյալ

նմանատիպ հայտարարությունների շարքին են դասվում այնպիսի հայտարարությունները, որոնք անձը արել է իրավական, բարոյական, սոցիալական կամ այլ պարտավորության իրականացման կամ նմանատիպ շահի հետապնդման ընթացքում: Մեկնաբանելով այս սկզբունքը՝ իրավապաշտպան կազմակերպությունը նշել է, որ միջազգային պրակտիկան վկայում է այն մասին, որ պաշտպանության այս մեխանիզմն ավելի ու ավելի լայն մեկնաբանություն է ստանում, հաշվի առնելով այս առումով խոսքի ազատության պաշտպանության կարեւորությունը:

*Times Newspaper LTD-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (2009 թվականի հունիսի 10)* գործով ՄԻԵԴ որոշման մեջ եվրոպական դատարանը, վկայակոչելով Անգլիայի ներպետական նախադեպային իրավունքը, տվել է հետեւյալ մեկնաբանությունը. «...հանրության բարօրությունը պահանջում է, որպեսզի քաղաքացիները կարողանան հաղորդակցվել ազատորեն (նույնիսկ եթե դա վերաբերում է փաստի մասին գրպարտող բնույթի հայտարարությանը, որի ճշմարտացիությունը հնարավոր չէ ապացուցել)՝ առանց վախենալու, որ կենթարկվեն պատասխանատվության: Այդ [կառուցակարգը] լրատվամիջոցներին ազատում է մասնավոր անձանց նկատմամբ գրպարտող բնույթի փաստացի հայտարարությունները ստուգելու պարտականությունից, եթե դրանք տարածվել են հաշվի առնելով բոլոր վերաբերելի հանգամանքները եւ համաձայն «պատասխանատու լրագրության» չափանիշների»:

*Ռոմանենկոն եւ այլոք ընդդեմ Ռուսաստանի (2010 թվականի հունվարի 8)* գործով ՄԻԵԴ-ը վերահաստատատել է այլ գործերով իր ամրագրած սկզբունքներից մեկը, ըստ որի՝ երբ մամուլը ներդրում է կատարում օրինական շահերից բխող հարցերի շուրջ հանրային քննարկման մեջ, այն սովորաբար պետք է իրավունք ունենա պաշտոնական փաստաթղթերից օգտվել առանց դրանց բովանդակությունն առանձին հետազոտելու: Այս առնչությամբ ՄԻԵԴ-ը նաեւ վկայակոչել է ԱՄՆ իրավական համակարգում գործող եւ լայնորեն տարածում ունեցող «բարեխիղճ վերարտադրման արտոնության» իրավական դոկտրինը եւ նշել, որ եթե լրագրողի հրապարակած տեղեկատվությունը վերցված է ոչ գաղտնի աղբյուրներից, ապա վերջինս հոդված 10-ի դրույթներով նախատեսված պատասխանատվություն չի կրում այդ տեղեկատվության բովանդակության համար:

Անդրադառնալով «բարեխիղճ հայտարարության» սկզբունքին, մի շարք այլ գործերով ՄԻԵԴ-ը (իր որոշումներից մեկում) տվել է հետեւյալ հավաքական կարծիքը. «Դատարանը վերհիշում է, որ երբ անհրաժեշտություն է առաջացել որոշելու, թե արդյո՞ք թերթերն ազատված են մասնավոր անձանց նկատմամբ գրպարտող բնույթի փաստացի հայտարարությունը ստուգելու սովորական պարտականությունից, դատարանը կիրառել է հայեցողություն՝ մի շարք գործոններ հաշվի առնելուց հետո, մասնավորապես՝ գրպարտության բնույթը եւ աստիճանը եւ թե ինչ աստիճանի թերթը կարող էր ողջամտության սահմաններում իր աղբյուրները համարել վստահելի՝ ներկայացված պնդումների առնչությամբ... Նշված գործոններն իրենց հերթին պահանջում են հաշվի առնել այլ գործոններ, օրինակ՝ աղբյուրի հեղինակավոր լինելը (Բլադետ Տրոմսոնն ու Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի (ՄՊ), վկայակոչված վերեւում), արդյո՞ք թերթը մինչեւ

հրապարակումը տարածելը ողջամտության սահմաններում կատարել է բավարար չափով հետազոտություն (Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի, 1995թ. ապրիլի 26-ի վճիռ, Շարք Ա, թիվ 313, կետ 37), արդյոք թերթը պատմությունը ներկայացրել է ողջամտորեն հավասարակշիռ կերպով (Բերգենս Տիդենդեն ու այլոք ընդդեմ Նորգելիայի, թիվ 26132/95, կետ 57, ՄԻԵԴ 2000-IV) եւ թե արդյոք թերթը հնարավորություն է ընձեռնել գրպարտված անձանց պաշտպանելու իրենց (Բերգենս Տիդենդեն ու այլոք ընդդեմ Նորվեգիայի, վկայակոչված վերելում, կետ 58):

*«Ողջամիտ հրապարակման»* սկզբունքը հիմնվում է այն հանգամանքի վրա, որ լրագրողական աշխատանքի առանձնահատկությունը պահանջում է լուրերը հրապարակել այն պահին, երբ դա խիստ անհրաժեշտ է ու անհետաձգելի, եւ ավելորդ ձգձգումը կարող է նվազեցնել լրատվանյութի հրատապությունը: Նույնիսկ լավագույն լրագրողը կարող է սխալ թույլ տալ, սակայն դա չի նշանակում, որ յուրաքանչյուր նման դեպքում պետք է շտապել լրագրողին կամ լրատվանյութը ենթարկել պատասխանատվության<sup>10</sup>: Նման դեպքերում պաշտպանությունը գործում է «բարեխղճության» եւ «ողջամտության» սկզբունքների հիման վրա, այսինքն՝ «հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավորությունների» եւ «պատասխանատվության» հետ: Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ եւ վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով (Բլադետ Տրոմսոն ու Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի 1999 թվականի մայիս 20, կետ 65):

«Արտիկլ 19» իրավապաշտպան կազմակերպության «Զրպարտության սահմանումը» ուսումնասիրության 9-րդ կետն անդրադառնում է «ողջամիտ հրապարակման» հասկացությանը: Ըստ «Արտիկլ 19»-ի՝ «ողջամիտ հրապարակում» պաշտպանությունը գործում է, եթե հիմնավորվում է, որ ցանկացած այլ անձ՝ տվյալ լրագրողի փոխարեն եւ ցանկացած այլ հանգամանքներում, տվյալ լրատվանյութը կտարածեր այնպես, ինչպես դա արել էր լրագրողը:<sup>11</sup> Ըստ «Արտիկլ 19»-ի մեկնաբանության՝ նույնիսկ եթե տեղեկատվությունը վերաբերում է հանրային կարեւորություն ունեցող դեպքի, լրագրողը կարող է օգտվել ողջամիտ հրապարակման պաշտպանության միջոցից անգամ այն դեպքում, երբ փաստերը չեն համապատասխանում իրականությանը: Հրապարակման ողջամտության սահմանները որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն, թե խնդրի հանրային նշանակության եւ դրա մասին հանրության կողմից ժամանակին տեղեկացված լինելու իրավունքի տեսանկյունից որքանով էր

<sup>9</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2011թ. հոկտեմբերի 20-ի եզրակացությունը ՀՀ ԱԾ պատգամավորներ Սամվել Ալեքսանյանը (անկուսակցական), Լեւոն Մարգարյանը եւ Ռուբեն Հայրապետյանը (Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության անդամներ)՝ ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Դարեսկիզբ» ՄՊԸ հայցի վերաբերյալ

<sup>10</sup> Նույն տեղում

<sup>11</sup> «Զրպարտության սահմանումը», «Արտիկլ 19» հասարակական կազմակերպություն, հուլիս, 2000թ.

կարելու խոսքի ազատության դրսևորումը: Մեկնաբանելով այս սկզբունքը՝ «Արտիկլ 19»-ը նշել է, որ բազմաթիվ երկրների դատարաններ ճանաչում են, որ «ողջամիտ» կամ, որ նույնն է, «պատշաճ» կամ «բարեխիղճ» գործելու դեպքում լրագրողը կարող է ազատվել պատասխանատվությունից: Պաշտպանության այս միջոցի կիրառումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ որոշ երկրների դատարաններ, ըստ ավանդական կանոնի, լրագրողներին ենթարկում են պատասխանատվության ցանկացած ոչ ճշմարիտ փաստի հրապարակման համար, կամ էլ այն դեպքերում, երբ լրագրողները չեն կարողանում ապացուցել այդ փաստի ճշմարտացիությունը: Այս ավանդական կանոնը անարդար է լրատվամիջոցների համար, քանզի վերջիններս ունեն կարելու առաքելություն՝ բավարարելու հանրության տեղեկացված լինելու իրավունքը եւ հաճախ չեն կարող համոզված լինել վկայակոչված փաստի ճշմարտացիության մեջ մինչ դրա հրապարակումը կամ հեռարձակումը: «Նույնիսկ ամենաազնիվ լրագրողը սխալներ է անում, եւ ցանկացած կեղծ հայտարարության համար նրան պատասխանատվության ենթարկելը վտանգի տակ է դնում հանրության՝ ժամանակին տեղեկացված լինելու իրավունքը»: Ուստի, «Արտիկլ 19»-ը գտնում է, որ առավել նպատակահարմար կլիներ, որպեսզի դատարանները կիրառեն ողջամտության թեսթը, այսինքն՝ դիտարկեին, թե արդյո՞ք լրատվամիջոցը գործել է մասնագիտական կանոններին համապատասխան, իսկ այն լրագրողները, ովքեր գործել են ողջամտության սահմաններում, պետք է պաշտպանված լինեն խոսքի ազատության իրավունքով:

***Պեղերսենն ու Բաադսգարդն ընդդեմ Դանիայի (2004 թվականի դեկտեմբերի 17)***  
գործով Եվրոպական դատարանն արձանագրել է՝ որպեսզի լրագրողը կարողանա օգտվել իր պաշտպանության իրավունքից հանրային հետաքրքրության հարցերի մասին տեղեկատվություն տարածելու ժամանակ, լրագրողը պետք է գործի բարեխիղճորեն, ունենա պատշաճ փաստական բազա եւ տրամադրի «վստահելի եւ ստույգ» տեղեկատվություն՝ լրագրողական էթիկային համապատասխան: Այնուամենայնիվ, նույն գործով դատարանը նշել է, որ անհրաժեշտ է հատուկ հիմքերի առկայություն, որպեսզի լրագրողն ազատվի մասնավոր անձանց զրպարտող փաստական հանգամանքների իսկությունը պարզելու իր պարտականությունից: Թե արդյոք նման հանգամանքներ կան՝ կախված է հատկապես վիճարկվող զրպարտչական արտահայտության աստիճանից ու բնույթից, նաեւ այն բանից, թե լրատվամիջոցը ողջամտության սահմաններում որքանով հուսալի կարող է դիտարկել իր հայտարարությունների հիմքում ընկած տեղեկատվության իր աղբյուրները:



# ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՆՈՐ ՄԵԴԻԱՅՈՒՄ

## ՀՀ իրավական և դատական պրակտիկան և միջազգային կարգավորումը

ՀՀ ներպետական իրավական պրակտիկայում դատարաններն, ըստ էության, վճիռ են կայացրել միայն երկու գործով, որոնք վերաբերում են համացանցում տարածված տեղեկատվության իրավաչափությանը:

Առաջինը *Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթ ՍՊԸ (ԵԿԴ/2491/02/11)* գործն է, որով փաստաբան Արթուր Գրիգորյանը վիճարկում էր լրատվամիջոցի էլեկտրոնային կայքում հրապարակված հոդվածին ի պատասխան մի խումբ ընթերցողների կողմից կատարված վեց մեկնաբանությունների (այսուհետ՝ քոմենտների) հիմքով, որոնցում, ըստ հայցվորի, հնչել էին վիրավորական և զրպարտող բնույթի արտահայտություններ: Քանի որ մեկնաբանություններ կատարած անձինք հայտնի չէին, հայցապահանջը բերվել էր լրատվամիջոցի դեմ՝ չնայած այն հանգամանքին, որ վիճահարույց արտահայտությունները լրատվամիջոցին չէին: Դատարանի կայացրած վճիռը բավականին ընդլայնում է էլեկտրոնային լրատվամիջոցների պաշտպանվածության շրջանակները: Այսպես, դատարանն ընդգծել է «Հրապարակ» օրաթերթի առանձնահատուկ դերը *«ժողովրդավարական հասարակությունում հանրային հնչեղություն ունեցող լուրերի մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում»* և ազատել վերջինիս վիճարկվող մեկնաբանությունների համար որեւէ պարտականությունից: Դատարանի դիրքորոշումը հետեւյալն է. *«Հրապարակ օրաթերթ» ՍՊ ընկերությունը, լինելով զանգվածային լրատվամիջոց, ունենալով առանձնահատուկ դեր ժողովրդավարական հասարակությունում հանրային հնչեղություն ունեցող լուրերի մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում և իրականացնելով նաև հանրային և մասնավոր մարմինների նկատմամբ «հսկողություն» իրականացնելու կարևոր դերը, լինելով խոսքի ազատության ջատագովներից և այն տարածողներից մեկը, չէր կարող նախքան Արթուր Գրիգորյանի գրավոր կամ բանավոր դիմելը սահմանափակել իր իսկ ընթերցողների ազատ արտահայտվելու իրավունքը (օրինակ՝ մեկնաբանությունները ջնջել, հեռացնել), քանի որ այն միանշանակ կերպով կդիտվեր ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ուստի և օրաթերթը չի կարող կրել պարտականություններ այլ անձանց կողմից թողնված մեկնաբանությունների համար, քանի որ առկա չէ վերջինիս դիտավորությունը հայցվոր Արթուր Գրիգորյանին վիրավորանք կամ զրպարտություն հասցնելու մեջ, ներկա պահին թվով վեց մեկնաբանությունները հեռացված են կայքէջից, անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածած անձանց պարզելն անհնար է, քանի որ վերջիններս հանդես են եկել իրենց ծածկանուններով և թողել են իրենց մեկնաբանությունները առկա հոդվածի վերաբերյալ:»*

Դատարանն իր վճռում փաստորեն օգտագործել է բարեխիղճ հայտարարության եւ ողջամիտ հրապարակման պաշտպանության կառուցակարգերը, վկայակոչելով այդ կառուցակարգերի հիմնական տարրերը՝ հողվածում քննարկվող թեմայի հանրային նշանակությունը, տեղեկատվության ներկայացման ձևի բարեխիղճությունն ու հավասարակշռվածությունը, ինչպես նաև օրաթերթի կողմից հայցվորի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու դիտավորության բացակայությունը: Ընդամին, գործի քննության արդյունքում դատարանը հանգել է այն եզրակացության, որ ««Հրապարակ օրաթերթ» ՄՊ ընկերության գործողություններում դիտավորություն չկա, ընկերությունը Արթուր Գրիգորյանի պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին վիրավորանքի ու զրպարտության միջոցով վնաս չի պատճառել, քանի որ «Քաղաքացիներն անբարեխիղճ փաստաբանների զոհ» վերտառությամբ տպագրված հողվածը վերաբերել է հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի, որի ներքո թվով վեց մեկնաբանությունները կատարել են բոլորովին այլ անձինք, որոնք հանդես են եկել ծածկանուններով եւ վերջիններիս անձը հայտնի չէ, այսինքն՝ օրաթերթը հավասարակշռված եւ բարեխողճորեն է ներկայացրել այդ տվյալները, հետագայում՝ «Հրապարակ» օրաթերթ ՄՊ ընկերությունը՝ դրսևորելով բարի կամք Արթուր Գրիգորյանի սուբյեկտիվ պահանջի առթիվ, վեճի առարկա թվով վեց մեկնաբանությունները հեռացրել է ինտերնետային կայքէջից, այլ կերպ՝ առկա չէ «Հրապարակ» օրաթերթ ՄՊ ընկերության դիտավորության կանխավարկածը, որը զրպարտության պարագայում խոսքը վերաբերում է դիտավորությամբ կեղծ, իրականությանը չհամապատասխանող փաստերի, փաստացի տվյալների տարածման միջոցով անձի արժանապատվությունն արատավորելուն, նրան հանցանքի կամ զանցանքի մեջ իրականությանը չհամապատասխանող փաստերի հիման վրա մեղադրելուն, իսկ վիրավորանքը ենթադրում է անձի՝ դիտավորությամբ, կանխամտածված նվաստացում, հետեւաբար հայցը ենթակա է մերժման՝ անհիմն լինելու հիմքով»:

Դատարանը փաստորեն եզրահանգել է, որ լրատվամիջոցի կողմից վիրավորելու կամ զրպարտելու դիտավորություն առկա չէր, քանի որ քոմենթների հեղինակները այլ անձինք են, մինչդեռ լրատվամիջոցը սուսկ տրամադրել էր հարթակ (ֆորում) այդ քոմենթների համար, բացի այդ լրատվամիջոցը որոշ ժամանակ անց ջնջել ու հեռացրել էր նշված քոմենթները: Սակայն, միեւնույն ժամանակ, ցանկալի կլիներ, որ դատարանն իր որոշմամբ անդրադառնար հարցի մյուս կարեւոր կողմերին եւս: Այսպես, միջազգային իրավունքի եւ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները եւ կարգավորող իրավական նորմերը լրատվամիջոցի պատասխանատվության հարցը լուծելիս գնահատող հատկանիշներ են համարում նաեւ այնպիսի հանգամանքներ, ինչպիսին են լրատվական գործունեություն իրականացնողի կողմից քոմենթների մասին **իրազեկված** լինելու եւ քոմենթների դաշտը որոշակիորեն **վերահսկելու** հանգամանքները<sup>12</sup>: Այլ կերպ ասած, կարեւոր է

<sup>12</sup> Տե՛ս ի թիվս այլ փաստաթղթերի՝ Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի 2000թ. հունիսի 8-ի 2000/31/ԵՀ հրահանգը «Ներքին շուկայում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների, մասնավորապես էլեկտրոնային առևտրի որոշ իրավական հայեցակետերի մասին», հողված 14: Տե՛ս նաև **Դելֆին ընդդեմ Էստոնիայի** (որոշ.), ՄԻԵԴ, թիվ 64569/09, կոմունիկացված 11/02/2011թ.: Տե՛ս նաև Մարդու իրավունքների շեյնիսկյան հիմնադրամի amicus curie ընթացակարգի շրջանակներում ներկայացված նկատառումները **Դելֆին ընդդեմ Էստոնիայի** գործով, որի ամբողջական տեքստը հասանելի է հետեւյալ էլեկտրոնային հասցեով՝ [http://www.hfhr.org.pl/obserwatorium/images/Delfi\\_amicus.pdf](http://www.hfhr.org.pl/obserwatorium/images/Delfi_amicus.pdf)

հաշվի առնել, թե արդյո՞ք լրատվություն տարածողը որոշակիորեն կառավարում է իր նորությունների պորտալի վրա տեղադրված քոմենթների հոսքը: Այնպիսի փաստական հանգամանքներ, ինչպիսին են, օրինակ, լրատվամիջոցի կողմից բանալի բառերի միջոցով որոնողական համակարգերի կիրառումը, ընթերցողներին վիրավորական կամ զրպարտող բնույթի քոմենթները ընդգծելու հնարավորություն տրամադրելը, լրատվություն տարածողի կողմից հրապարակման ենթակա քոմենթների նախօրոք ընտրությունը (այլ կերպ՝ որոշակի խմբագրական գործողությունների կատարումը), հանդիսանում են գնահատող հատկանիշներ լրատվամիջոցի կողմից քոմենթների պորտալը որոշակիորեն կառավարելու փաստը հաստատված համարելու համար, ինչն էլ իր հերթին հիմք է հանդիսանում լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվության հարցը լուծելիս: Համենայն դեպս, գնահատման առարկա պետք է հանդիսանա ոչ միայն այն հանգամանքը, թե արդյո՞ք քոմենթների հեղինակը լրատվություն տարածողն է, այլ նաև այն, թե արդյո՞ք քոմենթների դաշտի կառավարումը լրատվամիջոցի կողմից գուտ մեխանիկական եւ պասիվ բնույթի է: Եթե լրատվամիջոցն իրականացնում է գործուն եւ ակտիվ բնույթի վերահսկողություն, ապա այս հանգամանքը կարող է հարց բարձրացնել լրատվամիջոցի պատասխանատվության մասին<sup>13</sup>:

Տվյալ դեպքում դատարանը հաշվի է առել այն փաստը, որ մինչեւ դատարան դիմելը հայցվորը վիճահարույց քոմենթները հեռացնելու պահանջով լրատվամիջոցին չէր դիմել, եւ, հետեւաբար, լրատվամիջոցն **իրազեկված չի եղել** իր հարթակում վիրավորական եւ զրպարտող բնույթի քոմենթների առկայության մասին, բայց ահա բոլորովին քննության առարկա չի դարձրել վերը նշված երկրորդ հանգամանքի առկայության հարցը՝ թե որքանով էր լրատվամիջոցը **կառավարում (վերահսկում)** քոմենթների հոսքը իր էլեկտրոնային էջում, քանի որ եթե ապացուցվեր, որ լրատվամիջոցը կառավարում կամ վերահսկում էր քոմենթների հոսքը, կապացուցվեր նաև, որ լրատվամիջոցը տեղյակ էր կամ չէր կարող տեղյակ չլինել քոմենթների մասին: Դատական քննության հաստատվել էին այնպիսի փաստեր, որոնց ցույց էին տալիս, որ պատասխանող լրատվամիջոցը կառավարում էր քոմենթների հոսքը: Օրինակ, լրատվամիջոցն ընդունել էր, որ պատասխանատու աշխատակիցը կարող էր ընտրել եւ հանել որոշ քոմենթներ, եւ որ դա հաստատված գործելաճ էր: Բացի այդ, հաստատվել էր (եւ դա հանրորեն հայտնի փաստ էր), որ լրատվամիջոցը ծաղկաքաղ էր արել հայցվորի վերաբերյալ կայքում տեղադրված այլոց վիրավորական բնույթի քոմենթները եւ դրանք հրապարակել առանձին տեքստով: Սրանք փաստեր էին, որոնք հաստատում էին, որ տվյալ դեպքում լրատվամիջոցը գիտեր եւ չէր կարող իմացած չլինել, որ իր հարթակից տարածվել է վիրավորական բնույթի խոսք: Այսինքն, թեև իրավունքի մասին հարցի հիմքով դատական որոշումը առաջադեմ էր եւ զգալիորեն ընդլայնում էր լրատվամիջոցների իրավունքները, փաստերի ուժով դատական ակտը թերի էր, քանի որ դատարանը փաստերի ու ապացույցների պատշաճ հետազոտություն չէր կատարել:

<sup>13</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2012թ. մայիսի 30-ի եզրակացությունը **փաստաբան Արթուր Գրիգորյանն` ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի** հայցի հիման վրա Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2012թ. մարտի 7-ին կայացրած վճռի վերաբերյալ

Դատական ստուգման նման նեղ շրջանակները չեն ապահովում արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություն: Ավելին՝ նման իրավակարգավորումը հակասում է նաև Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ կետին, համաձայն որի՝ եթե տեղեկատվության աղբյուրը հայտնի չէ, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ գրպարտությունը հրապարակային ներկայացնողը: Տվյալ դեպքում քոմենթների հեղինակները հայտնի չէին, սակայն այնքանով, որքանով այդ քոմենթները հրապարակայնորեն տարածվել էին ընկերության **տրամադրած** հարթակից, ընկերությունը կամա թե ակամա դառնում է վիճահարույց տեղեկատվության «հրապարակային տարածող»՝ հետևաբար նաև քաղաքացիական դատավարության սուբյեկտ: Այս առումով անընդունելի է նաև «Հրապարակ օրաթերթ» ՍՊ ընկերության դիրքորոշումը դատական քննության ընթացքում, ըստ որի ընկերությունը որեւէ պարտականություն չի կրում իր էջում հրապարակված այլոց մեկնաբանությունների համար, քանի դեռ դրանք հոսում են սոցիալական ցանցերից եւ չեն պատկանում բովանդակություն արտադրողին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ: Յուրաքանչյուր ոք ազատ խոսքի իրավունք ձեռք բերելու հետ միասին ձեռք է բերում նաև որոշակի պարտականություններ: «Իրավունք» եւ «պարտականություն» հասկացությունները գուգորդված են: Այս ձեւաչափը շարունակում է մնալ անփոփոխ՝ նույնիսկ մեդիա տեխնոլոգիաների սրընթաց զարգացման արդի ժամանակաշրջանում: Հետևաբար, զուտ այն հանգամանքը, որ լրատվամիջոցը տրամադրել է տեխնիկական հարթակ այլոց մեկնաբանությունների համար, լրատվամիջոցին չի ազատում իր պարտականություններից եւ պարտավորություններից<sup>14</sup>:

Այս վճռից հետո՝ 2012 թվականի ապրիլի 27-ին, **Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոնի»** գործով Վճռաբեկ դատարանի կայացրած նախադեպային որոշումը հիմք ընդունելով՝ կարելի է եզրակացնել, որ այս դեպքում «Հրապարակ» օրաթերթը հանդիսացել է «տեղեկատվության միջոց», քանզի Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, նշել է, որ «Կոնվենցիայի 10-րդ հոդվածի գործողության ոլորտում են գտնվում ոչ միայն այն տեղեկությունները եւ գաղափարները, որոնք արտահայտվում են գրավոր կամ բանավոր խոսքի միջոցով, այլ նաև տարաբնույթ միջոցներով արտահայտված եւ տարածվող տեղեկություններն ու գաղափարները»: Ի թիվս այլ լրատվամիջոցների դատարանը նշել է նաև «էլեկտրոնային տեղեկատվական համակարգերը»: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի մեկնաբանություններից հետևում է, որ հետագայում դատարանները նմանատիպ գործերով անպայման պետք է պարզեն, ինչպես արդեն նշվեց վերելում, թե որքանով է լրատվամիջոցը կառավարում (վերահսկում)

<sup>14</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2012թ. մայիսի 30-ի եզրակացությունը **Վաստասարան Արթուր Գրիգորյանն՝ ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի** հայցի հիման վրա Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. մարտի 7-ին կայացրած վճռի վերաբերյալ

քումենթների հոսքը իր էլեկտրոնային էջում, այլապես Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշմանը համապատասխան՝ թերթը, որպես «տեղեկատվություն հրապարակող», կարող է պատասխանատվություն կրել: Ընդ որում, խոսքը չի վերաբերում միայն առցանց **լրատվամիջոցներին**: Ցանկացած ընկերություն, եթե տրամադրում է առցանց **ինտերակտիվ** ծառայություններ, ենթարկվում է նշված իրավակարգավորմանը, օրինակ՝ էլեկտրոնային գրադարաններ, խորհրդատվական ծառայություններ, սոցիալական կամ մասնագիտական ֆորումներ, գովազդային ծառայություններ, եւ այլն: Այս առնչությամբ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հստակ է՝ «տեղեկատվություն հրապարակողը, եթե նույնիսկ հրապարակել է տեղեկատվության բովանդակությունը բառացի կամ բարեխիղճ եւ հղում է կատարել աղբյուրին, չի ազատվում պատասխանատվությունից, եթե դատավարության ընթացքում կապացուցվի, որ նա գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այս դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ:»

Այս գործում կարելու էր նաեւ դատարանի այն եզրահանգումը, ըստ որի հայցվորը մինչեւ դատարան դիմելը չէր ծանուցել լրատվամիջոցին վիճահարույց քումենթները հանելու համար, եւ նման ծանուցման բացակայության պայմաններում լրատվամիջոցը չէր կարող ողջամտության սահմաններում գիտակցել, որ իր հարթակից տարածվել էին զրպարտող բնույթի հայտարարություններ: Նման մոտեցումը առցանց լրատվամիջոցներին տրամադրում է **Notice and take down (ծանուցիք եւ հանիք) պաշտպանական համակարգը**, համաձայն որի լրատվամիջոցը չի կարող պատասխանատվություն կրել իր հարթակից տարածված արտահայտության համար, եթե այդ արտահայտությունը հանելու համար հայցվորը նախօրոք չի ծանուցել լրատվամիջոցին: Նման իրավակարգավորումը էլեկտրոնային լրատվամիջոցներին տալիս է պաշտպանվելու մեծ հնարավորություն, քանի որ միավոր ժամանակահատվածի ընթացքում նրանց տեղեկատվական խողովակով պորտալով կարող են հոսել հազարավոր էլեկտրոնային ֆայլեր (ի տարբերություն տպագիր կամ ՋԼՄ-ների այլ տեսակների), եւ առցանց լրատվամիջոցները չեն կարող նախ ստուգել բոլոր ֆայլերը եւ հետո միայն հրապարակել դրանք՝ հատկապես, եթե առցանց լրատվամիջոցը տրամադրում է նաեւ **ինտերակտիվ** ծառայություններ: Կարելու է նաեւ հաշվի առնել, որ մինչեւ լրատվամիջոցը չծանուցվի զրպարտող բնույթի տեղեկության առկայության մասին, վերջինս չի կարող իմանալ իր հարթակում նման տեղեկության առկայության մասին, քանի որ, ի տարբերություն վիրավորանքի, զրպարտություն պարունակող հայտարարությունը կարող է վիրավորական արտահայտություն կամ բառ չպարունակել: Հետեւաբար, բոլոր դեպքերում անձը պետք է նախ ծանուցի լրատվամիջոցին եւ մերժում ստանալուց հետո դիմի դատարան՝ ինչը չէր արել Արթուր Գրիգորյանը: «Ծանուցիք եւ հանիք» պաշտպանությունը ըստ էության բխում է վերը նշված «իրազեկված» լինելու սկզբունքից, համաձայն որի լրատվամիջոցը չի կարող պատասխանատվություն կրել վիրավորական կամ զրպարտող բնույթի հայտարարության համար, եթե

ապացուցի, որ չի իմացել կամ չէր կարող իմացած լինել, որ իր հարթակում տեղադրված է նման հայտարարություն:

*Դանիել Իռաննիսյանը, Բայանդուր Պողոսյանը եւ Հասմիկ Միմոնյանն ընդդեմ «Մեկ Ազգ» կուսակցության (ԵԱԴԴ/0074/02/12) գործով հայաստանյան դատական պրակտիկայում առաջին անգամ դատարանն անդրադարձել է սոցիալական ցանցերում տարածված տեղեկատվության իրավաչափությանը: Քանի որ այս գործով վճիռը կայացվել է Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից հետո, դատարանն իր դիրքորոշումներն արձանագրելիս հիմնվել է Վճռաբեկ դատարանի տված պարզաբանումների վրա: Մասնավորապես, քննարկելով այն հարցը, թե արդյո՞ք «Facebook» համացանցային կայքում «Մեկ ազգ» կազմակերպությունների դաշինք» խորագրի տակ արված մեկնաբանությունները կարող են համարվել հրապարակային հայտարարություններ, դատարանն անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի ապրիլի 27-ի (ԼԴ/0749/02/10) նախադեպային որոշման մեջ մեջբերված արտահայտության հրապարակային ներկայացման եղանակներին. «հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության միջոցով, ռադիոյի կամ հեռուստատեսության միջոցով հեռարձակմամբ, զանգվածային լրատվության միջոցներով տարածմամբ, համացանցի միջոցով տարածմամբ, ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ՝ թեկուզ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով: Այդպիսի արտահայտությունների ներկայացումը հասցեստիրոջը չի կարող համարվել հրապարակային, եթե դրանք ներկայացնող անձը բավականաչափ միջոցներ է ձեռնարկել դրանց գաղտնիությունն ապահովելու ուղղությամբ, որպեսզի դրանք հասանելի չդառնան այլ անձանց»:*

Ավելին, վկայակոչելով արդեն նախադեպային իրավունքով կայուն հաստատված «երրորդ անձի» չափորոշիչը՝ դատարանը միեւնույն ժամանակ ներմուծել է «հասանելի է բոլորին» չափորոշիչը, որը, կարծում ենք, ավելի նպատակահարմար կիրառություն կարող է ունենալ համացանցում տարածվող տեղեկատվության առնչությամբ:<sup>15</sup> Օրինակ, «Facebook» սոցիալական ցանցի օգտատերը կարող է իր հայտարարությունների տարածման այնպիսի ռեժիմ ընտրել, որի դեպքում հայտարարությունը հասանելի լինի միայն իր ընկերներին՝ նրանք, ովքեր փոխադարձ համաձայնությամբ կարդում են մեկը մյուսի, օրինակ, ստատուսները, կամ էլ իր ընկերներից կոնկրետ մեկը: Մեկ այլ դեպքում օգտատերը կարող է ընտրել այնպիսի ռեժիմ, որի դեպքում իր ստատուսները կարողանան կարդալ ոչ միայն իր ընկերները, այլ նաև ցանկացած այցելու, այլ կերպ՝ լայն հանրությունը: Այս դեպքում կարելի է ասել, որ հայտարարությունը տարածվել է այնպես, որպեսզի հասանելի լինի բոլորին: Հաղորդակցվելու հենց նման եղանակ էր ընտրել տվյալ դեպքում «Մեկ Ազգ» կուսակցությունը:

<sup>15</sup> Տեղեկատվական վեճերի խորհրդի 2012թ. սեպտեմբերի 7-ի եզրակացությունը **Դանիել Իռաննիսյանը, Բայանդուր Պողոսյանը եւ Հասմիկ Միմոնյանն ընդդեմ «Մեկ Ազգ» կուսակցության** հայցի հիման վրա Երևան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 28.06.2012. վճռի վերաբերյալ

# ՓԱՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՂ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀՀ իրավական եւ դատական պրակտիկան

Փաստերի եւ գնահատող դատողությունների վերաբերյալ դատական դիրքորոշումներին ու ՀՀ դատարանների կողմից դրանց կիրառմանն անդրադարձել է «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը՝ զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մշտադիտարկման ընթացքում<sup>16</sup>: Ստորեւ ներկայացնում ենք այդ ուսումնասիրությունից մի հատված:

«Գնահատող դատողություն» հասկացությունը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով սահմանված չէ, որը, ինչպես բազմիցս նշել ենք, այս հոդվածի թերություններից մեկն է: Դա է պատճառը, որ դատական պրակտիկայի սկզբում՝ 2010 թվականի հունիսից մտահոգության առարկա էր հանդիսանում, թե արդյո՞ք դատարանները հաշվի կնստեն մի այնպիսի իրավական կատեգորիայի հետ, որը չի արտահայտված կարգավորող իրավական նորմում, ինչպես նաև օրենքներում: Նման հանգամանքներում, օրինակ, Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկան շարունակ բախվում էր Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածը սահմանում էր միայն «տեղեկություն» (сведения) հասկացությունը, եւ դատարանները արտահայտված կարծիքները եւ գնահատող դատողությունները քննելիս դրանք գնահատում էին «տեղեկություն» հասկացության ներքո՝ հայցվորներից կամ պատասխանողներից պահանջելով ապացուցել դրանց ճշմարտացիությունը:<sup>17</sup>

Ի տարբերություն Ռուսաստանի՝ Հայաստանում գնահատող դատողություն հասկացությունը քննության առարկա դարձավ ապաքրեականացումից հետո սկիզբ առած դատական պրակտիկայի հենց սկզբից: Սա պայմանավորված էր նախ եւ առաջ այն հանգամանքով, որ եւ՝ հայցվորները, եւ՝ պատասխանողները հետեւողականորեն իրենց փաստարկներում (նույնիսկ նախկին օրենսդրական նորմերով կարգավորվող դատական գործերում, որտեղ ընդհանրապես բացակայում էր փաստացի հայտարարություն եւ կարծիք տարբերակումը<sup>18</sup>) վկայակոչում էին գնահատող դատողություն հասկացությունը եւ իրենց պաշտպանությունը կառուցում մասամբ այդ հասկացության վրա: Դատարաններն

<sup>16</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Իրավունքի գերակայություն» ՀԿ

<sup>17</sup> Տե՛ս, օրինակ, **Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի**, թիվ 23472/03), 21/07/2005, § 29: Տե՛ս նաև The State of the Media Law in Russia, էջ 101: Ուսումնասիրության ամբողջական տեքստը հասանելի է <http://www.tourolaw.edu/ILR/uploads/articles/V12/Sheftel.pdf> կայքէջում:

<sup>18</sup> Տե՛ս Հրայրա Քեշիշյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթ ՄՊԸ-ի ԵԿԴ/1765/02/09 գործով դատական ակտը, մասնավորապես՝ կողմերի պնդումները

Էլ իրենց հերթին հենց առաջին իսկ դատական գործերից<sup>19</sup> չընդվզեցին գնահատող դատողություն կամ գնահատական-դատողություն նոր հասկացության դեմ, այլ դա ընդունեցին որպես ներպետական իրավունքի մաս կազմող հասկացություն, քանի որ կողմերը նման պնդումները ներկայացնում էին, որպես կանոն, Եվրոպական դատարանի նախադեպերի վկայակոչմամբ:

Դատական պրակտիկայի ողջ ընթացքում, ընդհուպ մինչև ամենավերջին գործերը եւ կայացված վճիռները, դատարանները հայցվորներից չեն պահանջել ապացուցել գնահատական-դատողության ճշմարտացիությունը՝ ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային մոտեցումը, համաձայն որի կարծիքները, գնահատող դատողությունները ենթակա չեն ապացուցման: Դրա փոխարեն, դատարանները հայցվորների կամ պատասխանողների կողմից որպես գնահատող դատողություն համարված արտահայտությունները քննել են դրանց արատավորող բնույթը, վիրավորանք հանդիսանալը կամ չհանդիսանալը պարզելու նպատակով վիրավորելու դիտավորության առկայության լույսի ներքո:

Ինչպես զրպարտության, այնպես էլ վիրավորանքի հանգամանքը պարզելու նպատակով դատարանները հակված են եղել կիրառել օբյեկտիվ իրականությունից բխող չափանիշներ: Դրա օրինակն է հանրության շրջանում մեծ հնչեղություն ստացած՝ դատարանի կողմից «ստիլյագ» արտահայտության ստուգաբանումը<sup>20</sup>, բառի սովորական իմաստով եւ այն համատեքստում, որի ներքո կիրառվել էր այդ բառը: Բառի սովորական իմաստը պարզելու համար դատարանն օգտվել է բացատրական բառարանից եւ որոշել, որ նշված բառը հանրության կողմից ներկայումս որպես հայեցողանք կամ այլ կերպ որեւէ վիրավորական իմաստ այլևս չի պարունակում: Իսկ ինչ վերաբերում է համատեքստին, ապա դատարանը հետեւյալ կերպ է մեկնաբանել դա. «*Ինչ վերաբերում է տվյալ արտահայտության բնույթին, ապա դատարանը համարում է, որ դա նույնպես հանդիսանում է գնահատող դատողություն-կարծիք, որով լրատվամիջոցը տեսակետ է հայտնել հայցվորի հագնվելու ոճի մասին: Որպես այդպիսին, ժողովրդի ընտրյալների կենսաձեւը հանդիսանում է հանրային հետաքրքրություն ներկայացնող նյութ եւ այդ առումով տեսակետ հայտնելիս թույլատրվում է օգտագործել չափազանցված լեզվառճ, որը, խնդիրը դիտելով մամուլի՝ որպես հանրային վերահսկողության արդյունավետ միջոց հանդիսանալու տեսանկյունից, նույնպես պաշտպանվում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Վերը նշվածի հիմքով դատարանը գտնում է, որ նշված արտահայտությունը վիրավորական չէ եւ տվյալ գործի հանգամանքների ներքո համապատասխանում է լրագրողական ազատության չափանիշներին»<sup>21</sup>:*

Այսինքն, դատարանը հաշվի է առել այնպիսի օբյեկտիվ պահանջներ, ինչպիսին են քաղաքական գործիչների նկատմամբ թույլատրելի քննադատության ավելի լայն շրջանակները, լրատվական նյութի հանրային հետաքրքրության առարկա հանդիսանալը, քաղաքական գործիչների կողմից լայն հանդուրժողականություն դրսևորելու պահանջը եւ այլն:

<sup>19</sup> «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ գործով դատական ակտը

<sup>20</sup> Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր խմբագրություն» ՍՊԸ դատական գործը

<sup>21</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Երավունքի գերակայություն» ՀԿ, էջ 24-25



Համատեքստի նման մեկնաբանություն կատարելով՝ դատարանը միաժամանակ հաշվի է առել, ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, որ գնահատող դատողությունները կառուցվել են որոշ փաստական հիմքերի վրա, որոնցից էլ լրատվամիջոցն օգտվել է: Նման մոտեցում է ցուցաբերվել նաև **Հայկ Բարուխանյանն ընդդեմ «Մսրագիր» ՍՊԸ** գործով կայացված վճռի հետևյալ ձեռնարկում մեջ: «Տվյալ դեպքում չստորագրված եւ անանուն նյութերում պարունակվող արտահայտությունները դատարանը դիտում է որպես հասարակության անդամների գնահատող դատողության արդյունք, քանի որ գնահատող դատողության առկայության փաստը հաստատված համարվելու համար առկա են բոլոր էական նախապայմանները, մասնավորապես՝ նյութի առկայության պարագայում հիշյալ անձինք արտահայտել են կարծիքներ՝ ունենալով որոշակի փաստական հանգամանք եւ բարի կամքի դրսևորում, որպիսին հանդիսացել է կայքէջում տպագրված նյութը, որտեղ հեղինակները դիմել են որոշ չափազանցությունների ու օգտագործել են հասարակությանը ցնցող արտահայտություններ՝ ուղղված քաղաքական գործչին ու քաղաքականության մասին, հետևաբար՝ գնահատողական դատողությունների ճշմարտացիությունն սպացուցման ենթակա չէ, քանի որ արտահայտված կարծիքների համար գոյություն ունեն հրապարակված նյութ՝ փաստական հիմք, որին համահունչ կայքէջում նշվել են տարբեր արտահայտություններ, որոնց նկատմամբ նույնպես քաղաքական գործչի կողմից պետք է դրսևորվի հանդուրժողականություն»<sup>22</sup>:

Այս ձեռնարկում մեջ նույնպես հաշվի է առնվել համատեքստն իր բոլոր կարևոր տարրերով, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում:

Վերը նշված օրինակներից տրամաբանորեն հակառակ մոտեցում է ցուցաբերվել թիվ **ԵԿԴ/2479/02/10** գործով<sup>23</sup> «Արյունը՝ Քոչարյաններից, կայֆը՝ Օառուկյանից, իսկ հակացնցումը՝ ԼՖիկից» վիճահարույց հողվածում օգտագործված «արյուն» բառը գնահատելիս: Թեև դատարանն այս դեպքում կրկին բառը մեկնաբանել է իր համատեքստում, սակայն համատեքստը սահմանափակել է հայցվորների սուբյեկտիվ շահերի շրջանակներով՝ անտեսելով հանրային հետաքրքրություն ներկայացնող այն խնդիրները, որոնք բարձրացվում էին այդ բառի փոխաբերական իմաստի ներքո. ««Արյուն» բառը իր տառացի շարադրանքով եւ բառացի պարզ մեկնաբանմամբ վիրավորանքի տարրեր չի պարունակում եւ այն գործածվում է այս իմաստով ... իր ամբողջ իմաստով, մինչդեռ հողվածով տպագրված խորագրով «Արյուն» բառը եւ այն Քոչարյաններին վերագրվող արտահայտությունն արդեն իսկ կորցնում է «Արյան» բառացի պարզ մեկնաբանությունը, քանի որ տվյալ նյութը ընթերցելիս՝ ընթերցողի մոտ այն առաջացնում է բացասական տպավորություններ, այսինքն՝ այն կարող է ընկալվել արյունը վերագրվող անձանց տարբեր բացասական ձեռքով գնահատելու միջոցով (օրինակ՝ որպես հանցանք կատարած անձի), ուստի այդ արտահայտությունը պատասխանողի կողմից տարածվել ու հետապնդել է հայցվորների ընտանիքի պատիվն ու

<sup>22</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Իրավունքի գերակայություն» ՀԿ, էջ 35

<sup>23</sup> Բելա եւ Սեդրակ Քոչարյաններն ընդդեմ «Ժամանակ» օրաթերթի դատական գործը

արժանապատվությունն արատավորելու, այսինքն՝ հասարակության աչքերին վերջիններիս հանդեպ ունեցած օբյեկտիվ կարծիքը նսեմացնելու նպատակ, որի հերքման ու դրանով պատճառված փոխհատուցման իրավունքը պատկանում է նշված ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին»<sup>24</sup>:

Իր հետագա հիմնավորումներում դատարանը շարունակել է ընդգծել արտահայտության հայցվորների վրա հնարավոր բացասական ազդեցության մասին, սակայն վիճահարույց արտահայտության «հանրային» համատեքստի մասին որևէ գնահատական չի տվել:

Հետագայում, հաշվի առնելով «գնահատող դատողություն» հասկացության լայն կիրառումը թե՛ ներպետական եւ թե՛ ՄԻԵԴ դատական պրակտիկայում, Վճռաբեկ դատարանն իր երկու նախադեպային որոշումներում **«գնահատող դատողություն»** եւ **«փաստեր»** եզրույթները մեկնաբանել է հետեւյալ կերպ. *«Անդրադառնալով «Ստույգ փաստեր» եզրույթին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ այդպիսին հանդիսանում են այն փաստերը, որոնք հիմնավորվում են ապացույցներով տեղեկատվության հրապարակման հետ միաժամանակ կամ հանդիսանում են հանրահայտ փաստեր (ապացուցման անհրաժեշտություն չունեցող): Անհրաժեշտ է ուշադրության դարձնել փաստերի եւ գնահատող դատողությունների տարբերակման խնդրին, քանի որ դրանք մեծ կարեւորություն են ներկայացնում գործի քննության համար եւ մեծապես կարող են ազդել գործի էլքի վրա: Եվրոպական դատարանը, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում անդրադառնալով նշված խնդրին, հստակ տարանջատում է կատարում փաստերի եւ գնահատող դատողությունների միջեւ, որի վերաբերյալ ձեւավորել է հետեւյալ ընդհանուր սկզբունքը. «Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունները չեն կարող ապացուցվել. գնահատող դատողությունների ապացուցումն անհնարին խնդիր է, եւ նման պահանջը խախտում է կարծիքի արտահայտման ազատությունը, որը Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի հիմնարար մասերից է» (տե՛ս Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի հուլիսի 8-ի վճիռը, կետ 46): Վերոգրյալից զատ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ է նաեւ հաշվի առնել, որ գնահատող դատողությունը, դիտարկելով որպես կարծիքի ազատ արտահայտման, այլ ոչ թե տեղեկություններ տարածելու իրավունքի դրսեւորում, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է գնահատման առարկա դարձնել այն, թե արդյո՞ք տվյալ դատողությունը հիմնված է որոշակի փաստերի վրա: Փաստական հիմքից զուրկ գնահատող դատողությունը պաշտպանված չէ պետական միջամտությունից: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է նաեւ նրանով, որ անդրադառնալով նշված հարցին՝ Եվրոպական դատարանը նշել է, որ անձնական կարծիքը կարող է չափազանցված համարվել՝ հատկապես փաստացի հիմքի բացակայության պայմաններում (տե՛ս Օբերշլիքն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, կետ 33)»:*

<sup>24</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Երավունքի գերակայություն» ՀԿ, էջ 42

## Միջազգային իրավական պրակտիկան եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Արտահայտվելու ազատության իրավունքի խախտումների վերաբերյալ գործերով Եվրոպական դատարանը տարանջատում է կատարում փաստերի եւ գնահատողական դատողությունների միջեւ, համարելով, որ եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն. դրանց ապացուցումն անհնարին է, քանի որ դրանք վերաբերում են համոզմունքների, նախապատվությունների ոլորտին (տես *Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի հուլիսի 8-ի վճիռը*). Միևնույն ժամանակ, ՄԻԵԴ-ը նշել է, որ գնահատողական դատողության եւ դրա փաստական հիմքի միջեւ կապի անհրաժեշտությունը տարբեր է՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից (*Ֆելդեկն ընդդեմ Սլովակիայի*, 86-րդ պարբերություն, *Դե Հասն ու Գիջսելսն ընդդեմ Բելգիայի*, գործի 47-րդ պարբերություն)<sup>25</sup>: Այսպես, օրինակ, երկրորդ գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ լրագրողին իր արտահայտած գնահատողական դատողությունների համար պատասխանատվության ենթարկելով՝ ներպետական դատարանները խախտել են Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, քանի որ ըստ ՄԻԵԴ-ի՝ թեև որոշ դեպքերում գնահատող դատողությունները կարող են չափազանցված համարվել, մասնավորապես, երբ դրանք հիմնված չեն փաստական հանգամանքների վրա, սակայն տվյալ գործով դրանք այդպիսին չէին կարող համարվել: Սակայն մեկ այլ գործով (*Պրագերն ու Օբերշլիկն ընդդեմ Ավստրիայի*, 1995թ. ապրիլի 26-ի վճիռ, շարք Ա, թիվ 313, կետ 37) ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ թեև «լրագրողական ազատությունը ենթադրում է նաև որոշակի աստիճանի չափազանցություն եւ նույնիսկ սադրանքի հնարավորություն», ավստրիական դատավորների մասին լրագրողի արտահայտած կարծիքները չափազանցված են եղել, ուստի Դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանների որոշումներով խոսքի ազատության միջամտությունը չի հակասել Կոնվենցիայի 10-րդ հոդվածին:

«Արտիկլ 19» իրավապաշտպան կազմակերպության «Զրպարտության սահմանումը» ուսումնասիրության «Կարծիքների արտահայտում» վերտառությամբ 10-րդ սկզբունքը սահմանում է, որ անձը զրպարտության եւ վիրավորանքի օրենսդրության շրջանակներում չի կարող ենթարկվել պատասխանատվության կարծիքի արտահայտման համար: Նույն սկզբունքի համաձայն՝ կարծիք կարող է համարվել այն արտահայտությունը, որը.

*I. հիմնված չէ փաստական հիմքի վրա, որի կեղծ լինելը կարող է ապացուցվել, կամ*

*II. որը ելնելով տվյալ հանգամանքներից, այդ թվում արտահայտության համար օգտագործված լեզվական ոճից (ինչպես, օրինակ, հոետորական,*

<sup>25</sup> ՏՎԽ 2011թ. հոկտեմբերի 20-ի եզրակացությունը ՀՀ ԱԾ պատգամավորներ Սամվել Ալեքսանյանը (անկուսակցական), Լեւոն Մարգարյանը եւ Ռուբեն Հայրապետյանը (Հայաստանի Հանրապետական կուսակցության խմբակցության անդամներ) ընդդեմ «Հայկական ժամանակ» օրաթերթի հիմնադիր «Դարեսկիզբ» ՄՊԸ հայցի վերաբերյալ

*չափազանցություն, երգիծանք կամ ծաղրանք), ողջամտորեն չի կարող համարվել փաստերի շարադրանք:*

Մեկնաբանելով այս սկզբունքը, «Արտիկլ 19» կազմակերպությունը նշում է, որ զրպարտության եւ վիրավորանքի այն գործերում, որոնցում վիճարկվում է նաեւ կարծիքների արտահայտումը (որոնք նաեւ կոչվում են գնահատող դատողություններ), դատական պրակտիկայում դեռուես չկա հստակ չափորոշիչ, սակայն դատական պրակտիկայից մի բան պարզ է՝ գնահատող դատողություններն ունեն պաշտպանության առավել բարձր աստիճան: Որոշ երկրների դատական պրակտիկայում գնահատող դատողություններն ունեն բացարձակ պաշտպանվածություն, որը հիմնված է անձի՝ կարծիք ունենալու բացարձակ իրավունքի վրա: «Արտիկլ 19» կազմակերպությունը նաեւ գտնում է, որ կարծիքի «ողջամտությունը» որոշելու նկատմամբ չափազանց սուբյեկտիվիզմը նպաստում է բացարձակ պաշտպանության իրականացմանը, քանի որ որոշ արտահայտություններ առաջին հայացքից կարող են որպես փաստերի շարադրանք ընկալվել, սակայն, հաշվի առնելով դրանց լեզվական ոճը կամ համատեքստը, ողջամիտ չէր լինի դրանք որպես այդպիսին ընկալել: Այնպիսի հռետորական մեթոդներ, ինչպիսին են չափազանցությունը, երգիծանքը կամ ծաղրանքը, դրա վառ օրինակն են: Հետեւաբար, «Արտիկլ 19» կազմակերպությունն առաջարկում է զրպարտության եւ վիրավորանքի մասին օրենքներում սահմանել գնահատող դատողություն հասկացությունը եւ երաշխավորել, որ օրենքով գործող հասկացությունն ապահովում է դրա **իրական, այլ ոչ թե առաջնային իմաստը:**

**ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽՀԱՎԱՍԱՐԱՐԱԿՇՈՒՄԸ  
ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ**

**ՀՀ իրավական եւ դատական պրակտիկան**

ՀՀ դատական պրակտիկայում դատարանները քննել եւ ըստ էության վճիռներ են կայացրել այնպիսի գործերով, որոնցում դատարանները կշեռքի նժարի վրա են դրել մի կողմից՝ պատասխանողի խոսքի ազատության եւ մյուս կողմից՝ պատասխանողի որեէ այլ հիմնարար իրավունք: Ներպետական ատյանների կողմից ուսումնասիրված երկու գործերում վեճերը շոշափել են մի կողմից՝ լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը եւ մյուս կողմից՝ քաղաքացիների մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունքը: Նկատի ունենք *«Կյանքի խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության եւ կազմակերպության ղեկավար Արթուր Միմոնյանն ընդդեմ «Ժրավունք հետաքննություն»* (ԵԿԴ/2840/02/11) եւ *Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ Հանրային հեռուստարձնկերության* (ԵԿԴ/2621/02/10) գործերը, որոնցից երկրորդի դեպքում դատարանն ըստ էության վճիռ չի կայացրել, քանի որ կողմերը եկել են հաշտության համաձայնության:

*«Կյանքի խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության եւ կազմակերպության ղեկավար Արթուր Միմոնյանն ընդդեմ «Ժրավունք հետաքննություն»* (ԵԿԴ/2840/02/11) գործով առաջին ատյանի դատարանի կայացրած վճիռը եւ Վերաքննիչ դատարանի որոշումը մտահոգության տեղիք են տալիս, քանի որ դատարանները չեն ապահովել դատական ստուգման ամբողջական եւ արդյունավետ շրջանակներ: Առաջին ատյանի դատարանը քննել է «աղանդ» բառը՝ ելնելով դրա առօրյա գործածական եւ բառարանային իմաստից, առանց դիտարկելու դրա օգտագործման համատեքստը: Այսպես, «աղանդ» բառը նույնիսկ իր սովորական, առօրյա իմաստով կարող է անհանգստություն առաջացնել, ցնցել եւ այդ իմաստով անընդունելի համարվել կրոնական որոշ խմբերի համար: Այդուհանդերձ, այդ հանգամանքը դեռ բավարար չէ պնդելու համար, որ լրատվամիջոցներն անցել են թույլատրելի քննադատության սահմանները ժամանակակից ժողովրդավարական սկզբունքների պայմաններում: Բացի նրանից, որ արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է նույնիսկ անհանգստություն պատճառող եւ սադրող խոսքը, ժողովրդավարական սկզբունքները հնարավորություն են տալիս, որպեսզի արտահայտվելու ազատությունն օգտագործվի որպես միջոց այլոց կրոնական հայացքների, համոզմունքների եւ նույնիսկ կրոնական հաստատությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու, դրանք բաց բանավեճի առարկա դարձնելու եւ նույնիսկ կոշտ քննադատության ենթարկելու համար՝ պայմանով, որպեսզի հանրային դիսկուրսի իրականացման նման եղանակը չվերածվի կրոնական ատելության հրահրման: Հետեւաբար, քննության առարկա պետք է հանդիսանար ոչ թե «աղանդ» բառի որեւէ *a priori* սահմանումը, այլ **համատեքստը**, որի շրջանակներում բառն օգտագործվել է: Եթե համատեքստը թշնամություն կամ

ատելություն սերմանող է, ապա նույնիսկ չեզոք իմաստային նշանակություն ունեցող բառը է կարող խնդիրներ առաջացնել: Ինչպես արդեն նշել ենք վերելում, վկայակոչելով «Արտիկլ 19» կազմակերպության ուսումնասիրությունը, անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել բառի իրական, այլ ոչ թե առաջնային իմաստի վրա: Յուրաքանչյուր անձ, ով քիչ թե շատ ծանոթ է մեր իրականությանը, գիտե, որ «աղանդ» բառը մեր հասարակության մեջ օգտագործվում է կրոնական փոքրամասնությունների նկատմամբ արհամարհական, ատելության, անհանդուրժողական եւ նույնիսկ թշնամության հրահրման իմաստով: Այս իմաստով, թեեւ «աղանդ» բառն ինքնին արատավորող իմաստ չի պարունակում, սակայն դրա շարունակական եւ շեշտադրված օգտագործումը վիճարկվող երկու հոդվածների ընդհանուր համատեքստի լույսի ներքո խնդրահարույց է: Հետեւաբար, հոդվածի ընդհանուր համատեքստը եւ դրանում նաեւ «աղանդ» բառի շարունակաբար եւ հետեւողականորեն օգտագործումը լրատվանյութը վերածում է կրոնական ատելություն սերմանող կամ հրահրող խոսքի:<sup>26</sup> Սակայն նույնիսկ այս դեպքում դատարանը չի անդրադարձել «աղանդ» բառի օգտագործման համատեքստին, նշելով, որ «տվյալ դեպքում հոդվածագրի կողմից հոդվածում նշված «աղանդ» բառը դատարանը դիտում է որպես հոդվածագրի գնահատող դատողության արդյունք, որտեղ հոդվածագիրն օգտագործել է հասարակությանը ցնցող արտահայտություններ, այդ թվում՝ կրոնական այդ կազմակերպությունն անվանելով «աղանդ»: Արձանագրելով, որ «հրապարակված նյութերում կատարված հրապարակային արտահայտությունների վերաբերյալ հայցվող միջամտությունը ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ չէ» դատարանը մերժել է հայցը:

Դատարանն ուշադրություն չի դարձրել նաեւ այն հանգամանքի վրա, որ իր առջեւ ունենալով (ինչպես դատարանն է նշել) կրոնական կազմակերպության եւ նրա ղեկավարի գործունեությունը լուսաբանելու եւ քննադատելու ու այդկերպ հասարակության շրջանում արձագանքներ առաջացնելու նպատակ (որն ինքնին իրավաչափ նպատակ է), լրատվամիջոցը պատրաստել է լրատվական նյութ՝ ամբողջությամբ եւ անվերապահորեն հիմնվելով երրորդ անձի հրապարակային հայտարարության վրա՝ առանց իր սեփական քննությունը կատարելու: Ու թեեւ լրագրության նման եղանակն ինքնին, ինչպես ասում են, չի հակասում օրենքի տառին, լրագրողական էթիկայի եւ պատասխանատու լրագրության տեսանկյունից նման եղանակը խնդրահարույց է: Կոնվենցիայի կիրառությունը ստուգելու նպատակով դատական ստուգում իրականացնելիս դատարանը պետք է պարզեր, թե արդյո՞ք լրագրողը վիճահարույց նյութը հրապարակելուց առաջ բարեխիղճ կերպով կատարել է իր սեփական քննությունը, եւ այդ իմաստով արդյո՞ք տվյալ հանգամանքների ներքո կարելի էր ասել, որ լրագրողը ազատված էր իր հայտարարությունների փաստական հանգամանքները ստուգելու լրագրողական պարտականությունից<sup>27</sup>:

<sup>26</sup> ՏՎԽ 2012թ. մայիսի 11-ի եզրակացությունը «Կյանքի խոսք» կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» եւ «Արգումենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի հայցի վերաբերյալ

<sup>27</sup> ՏՎԽ 2012թ. մայիսի 11-ի եզրակացությունը «Կյանքի խոսք» կազմակերպությունն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» եւ «Արգումենտի նեղելի վ Արմենիի» շաբաթաթերթերի հայցի վերաբերյալ

Հայաստանյան դատական պրակտիկայում **անմեղության կանխավարկածի** խախտումով մեկ դեպք է արձանագրվել, որն էլ ուսումնասիրվել է «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից: Ստորեւ ներկայացնում ենք հատված այդ կազմակերպության զեկույցից.

*«Թիվ ԵԱԴԴ/0003/02/11 գործով (Գեորգ Հայրապետյանն ընդդեմ «Մուլտի Մեդիա Կենտրոն Թիվի» ՓԲԸ-ի) «Կենտրոն» հեռուստատեսությունը հեռարձակել է ընդարձակ հաղորդում ընթացքի մեջ գտնվող դատական գործի վերաբերյալ, որի ժամանակ մեղադրյալը ներկայացվել է որպես լրտեսության ձեռով պետական դավաճանություն կատարած անձ: Ներկայացվել են գործի վերաբերյալ հանգամանքներ, մասնավորապես, որ մեղադրյալը, ունենալով նյութական շահագրգռվածություն, պետական գաղտնիք կազմող եւ հակահայկական քարոզչության համար նյութեր պարունակող տեղեկություններ է տրամադրել հակառակորդ երկրին, ինչի դիմաց ակնկալել է վարձատրություն: Նշված տեղեկությունները տարածվել են որպես հաստատված հանգամանք, այլ ոչ թե վարույթ իրականացնող մարմնի ենթադրություն կամ կասկած: Հաղորդման հեռարձակման պահի դրությամբ դատաքննությունն ավարտված է եղել միայն առաջին ատյանի դատարանում, սակայն մեղադրական դատավճիռը դեռ ուժի մեջ չէր մտել, քանի որ բողոքարկման ժամկետը չէր լրացել (հեռարձակումը կատարվել է 2010թ. նոյեմբերի 14-ից 21-ը, իսկ դատավճիռը հրապարակվել էր 2010թ. հոկտեմբերի 25-ին): Ինչպես հետագայում ցույց են տվել փաստերը, հեռարձակման պահին մեղադրյալի պաշտպանը պատրաստում էր վերաքննիչ բողոք: «Կենտրոն» հեռուստաընկերությունը դատարանում պնդել է, որ «Հետաքննություն» հաղորդաշարի շրջանակներում իրենք վերարտադրել են ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված քրեական գործի նյութերը եւ, հետեւաբար, իրենք ազատվում են պատասխանատվությունից Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով: Առաջին ատյանի, Վերաքննիչ եւ Վճռաբեկ դատարանները հաստատված հանգամանք են համարել, որ «պատասխանող Ընկերությունը հրապարակել է բացառապես քրեական գործի նյութերում եւ դատարանի դատավճռում շարադրված տեղեկություններ եւ հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին», «ներկայացրել է բացառապես այն եղելությունը, ինչն արտահայտված է քրեական գործի նյութերում՝ չկատարելով որեւէ սեփական հետեւություն եւ չարտահայտելով որեւէ անձնական կարծիք»: Դատարանն «իրավացիորեն հանգել է այն հետեւության, որ եթերում չի հնչել որեւէ տեղեկություն, որն արտահայտված չլիներ նախաքննական նյութերում»<sup>28</sup>:*

Թեւ տվյալ դեպքում լրատվամիջոցն իրավամբ օգտվում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասի պաշտպանությունից, այդուհանդերձ, **անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքը պարտավոր են պահպանել ոչ միայն քրեական դատավարության մարմինները, այլ յուրաքանչյուր ոք եւ հատկապես լրատվամիջոցները՝ հաշվի առնելով նրանց առանձնահատուկ դերը եւ առաքելությունը հանրության մեջ:** «Լրատվամիջոցների կողմից քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելու մասին» ԵԽՆԿ թիվ

<sup>28</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի 02/11/2011 որոշումը

(2003)13 Հանձնարարականի 2-րդ սկզբունքում նշված է, որ «անմեղության կանխավարկածի սկզբունքի նկատմամբ հարգանքը արդար դատավարության իրավունքի անքակտելի մասն է: Հետևաբար, լրատվամիջոցների կողմից ընթացքի մեջ գտնվող քրեական գործերի վերաբերյալ կարծիքներ ու տեղեկատվություն կարող է տարածվել կամ հաղորդվել միայն այն դեպքում, եթե դա չի վտանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը»: Հետևաբար, անկախ այն հանգամանքից, որ լրատվամիջոցը վերարտադրում էր վստահելի աղբյուրից ստացված տեղեկությունը, նա պարտավոր էր լրատվանյութը հեռարձակելիս հարգել մեղադրյալի անմեղության կանխավարկածը:

Այստեղ հարկ է նշել, որ սույն գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, որի որոշումը կայացվել է ի նպաստ լրատվամիջոցի, սահմանել է հետևյալը. «Տվյալ պարագայում մեկ անձի իրավունքը սահմանում է մյուսների պարտականությունը»<sup>29</sup>: Այսինքն՝ մեղադրյալի անմեղության կանխավարկածը լրատվամիջոցի համար ստեղծում էր դա հարգելու պարտականություն, առավել եւս, որ անմեղության կանխավարկածը հարգելու պարտականությունը նաեւ լրագրողական վարքագծի համընդհանուր ճանաչված նորմ է: Նշված մեջբերումից ակնհայտ է, որ դատարանի եզրահանգումը հակասության մեջ է մտնում իր իսկ կայացրած որոշման հետ:

### **Միջազգային իրավական պրակտիկան եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը**

ՄԻԵԴ-ն իր բազմաթիվ վճիռներում հիշատակել է, որ խոսքի ազատության իրավունքը չի կարող ընկալվել որպէս բացարձակ իրավունք, որը հնարավորություն է տալիս մամուլին գործել անպատասխանատու կերպով, այդ թվում մեղադրել անձանց հանցագործությունների մեջ՝ այդ պահին դրա համար բավարար հիմքերի բացակայության պարագայում եւ հնարավորություն չընձեռնելով այդ անձանց հակադրվել այդ մեղադրանքներին: Անմեղության կանխավարկածի հարգանքը տեղեկություններ ազատ տարածելու իրավունքի օրինական սահմանափակումներից մեկն է, ուստի պետք է պահպանել հավասարակշռությունը խոսքի ազատության իրավունքի ու մինչեւ դատարանի մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անմեղության կանխավարկածի պահպանման՝ անձանց իրավունքների միջեւ (*ի թիվս այլոց տե՛ս Ֆյուրսն ընդդէմ Մոլդովայի 2008 թ. հունիսի 29-ի, Վայթն ընդդէմ Շվեդիայի 2006 թ. սեպտեմբերի 19-ի ՄԻԵԴ որոշումները*):

Ինչ վերաբերում է խոսքի ազատության ու մտքի, խղճի, համոզմունքների ազատության հավասարակշռման պահանջին, ապա այս առումով մարդու իրավունքների ունիվերսալ (ՄԱԿ-ի համակարգ) եւ տարածաշրջանային

<sup>29</sup> Տե՛ս Վերաքննիչ դատարանի որոշման 4-րդ կետը, էջ 6



(եվրոպական՝ ԵԽ համակարգ) կառուցակարգերում գործում է հետեւյալ իրավակարգավորումը: **Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի** 18 եւ 19-րդ հոդվածները սահմանում են ազատ արտահայտվելու, մտքի, խղճի եւ կրոնի ազատության (այդ թվում նաեւ կրոնական հայացքները ազատորեն արտահայտելու) իրավունքները, իսկ 20-րդ հոդվածը արգելում է վերը նշված ազատությունները կիրառել ազգային, ռասայական կամ կրոնական ատելության օգտին որեւէ ելույթի կերպով, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք: Որեւէ բացառություն նշված սահմանափակումից սահմանված չէ: Հետեւաբար, ատելություն սերմանող խոսքն արգելված է բացարձակ իմաստով: Նույնանման իրավակարգավորում սահմանված է նաեւ տարածաշրջանային փաստաթղթերով՝ տվյալ դեպքում **Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով**, որի 9-րդ եւ 10-րդ հոդվածները սահմանում են ազատ արտահայտվելու եւ մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունքները, իսկ 17-րդ հոդվածով սահմանված է, որ Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որեւէ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի եւ ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով: Այստեղից եզրակացնում ենք, որ Կոնվենցիան թույլատրում է սահմանափակել ազատ խոսքը, եթե դա ներառում է կրոնական ատելություն,<sup>30</sup> աստծուն անարգող<sup>31</sup>, կրոնն անարգող խոսք (blasphemy) (богохульство)<sup>32</sup>, կամ եթե հնչում է բռնությունների կոչ անող խոսք, կամ եթե անձը հերքում է որոշ պատմական փաստեր, օրինակ՝ ցեղասպանություն:<sup>33</sup> Հայաստանի Հանրապետության ներպետական դատական պրակտիկայում դատարաններն այս խնդրին անդրադարձել են առայժմ երկու գործերով՝ վերելում նշված *«Կյանքի խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության եւ կազմակերպության ղեկավար Արթուր Միմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն»* գործով (ԵԿԴ/2840/02/11) եւ *Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ Հանրային հեռուստաընկերության* (ԵԿԴ/2621/02/10) գործով: Առաջինի դեպքում դատական ստուգումն իրականացվել է թերի եւ անարդյունավետ, որի արդյունքում առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանները մերժել են կազմակերպության

<sup>30</sup> **Ի.Ա.-ն ընդդեմ Թուրքիայի**, թիվ 42571/98, 13/09/2005

<sup>31</sup> **Օտտո-Պրենինգեր Ինստիտուտն ընդդեմ Ավստրիայի**, թիվ 13470/87, 20/09/1994

<sup>32</sup> **Վինգրոֆն ընդդեմ Միացյալ Թագավորության**, թիվ (19/1995/525/611), 25/11/1996

<sup>33</sup> Տե՛ս, օրինակ, **Ռոժե Գարաուդին ընդդեմ Ֆրանսիայի** (որոշ.), թիվ 65831/01, ). Գարաուդին Ֆրանսիայում դատապարտվել էր զրպարտության հիմքով՝ Մամուլի ազատության մասին օրենքի (հին օրենք է, ընդունվել է 1881-ին, որոշ փոփոխությունների ենթարկվել վերափոխվել՝ 1990-ին)՝ 24-րդ հոդվածի հիման վրա, որը նախատեսում էր քրեական պատասխանատվություն մարդկության դեմ կատարված հանցագործությունները հերքելու համար եւ ում զանգատը ընդդեմ Ֆրանսիայի խշխանությունների մերժվել էր այնուհետեւ եվրոպական դատարանի կողմից: Եվրոպական դատարանը, վկայակոչելով մինչ այդ արդեն կայուն հաստատված նախադեպային իրավունքը, որը նույնպես կառուցվել էր Ֆրանսիայից բերված գործերի հիման վրա (**Լեհիդյուքսն ու Իստրնին ընդդեմ Ֆրանսիայի (ՄՊ)**, թիվ 55/1997/839/1045) ընդունել է մի նախադեպային սահմանում, համաձայն որի ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանությունը չի կարող տարածվել այնպիսի անձանց վրա, ովքեր մերժում են աներկբայորեն հաստատված այնպիսի պատմական փաստ, ինչպիսին է, օրինակ, Հոլոքոստը, քանի որ մարդկության դեմ ուղղված հանցագործությունը որպես պատմական փաստ մերժելով նման անձինք մերժում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիմքում ընկած հիմնարար արժեքները:

հայցադիմումը, իսկ երկրորդ դեպքում Հանրային հեռուստատեսությունը առաջարկել է հաշտություն, որն ընդունվել է կրոնական կազմակերպության կողմից: Հաշտության պայմանագրում հեռուստատեսությունը հերքել է իր կողմից տարածած տեղեկատվությունը:<sup>34</sup> Ինչ վերաբերում է դատարաններից դուրս ծավալվող ներպետական պրակտիկային, ապա այս առումով իրավիճակը բավականին մտահոգիչ է, քանի որ կրոնական փոքրամասնությունների հասցեին վիրավորական եւ զրպարտող բնույթի, ինչպես նաեւ ատելություն սերմանող խոսքը բացեիբաց խրախուսվում է ինչպես պետական մարմինների եւ պետական բարձր պաշտոնյաների, այնպես էլ Հայ առաքելական սուրբ եկեղեցու ներկայացուցիչների կողմից: Նշենք նաեւ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներով կրոնական թշնամանք տարածելը քրեորեն հետապնդելի արարք է եւ պատժվում է ազատազրկմամբ:

---

<sup>34</sup> Տե՛ս <http://hetq.am/arm/news/15563/hanrayiny-herqel-e-ehovayi-vkaneri-masin-hraparakats-texekatvutyuny.html>

# ԱՆՁԻ ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԻ ՀԱՄԲԱՎԻ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՂՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

## ՀՀ իրավական եւ դատական պրակտիկան

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 11-րդ կետի 11 «... փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

- 1) վիրավորանքի կամ զրպարտության եղանակը եւ տարածման շրջանակը.
- 2) վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը: Սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետեւանքով պատճառված գույքային վնասը:»

Պետք է նշել, որ «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ի 2010-2012 թվականի զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «ամենաշատը հայցվող իրավական պաշտպանության միջոցը հանդիսացել է զրպարտության կամ վիրավորանքի դիմաց դրամական փոխհատուցման պահանջը, որը հայցվել է 52 գործերից 45-ում (86.5%), այնուհետեւ հերքումը, որը հայցվել է 32 գործով (61.5%), դրան հաջորդում է դատական ծախսերի փոխհատուցման պահանջը, որը հայցվել է 25 գործով (48%), այնուհետեւ վիրավորանքի դիմաց ներողություն խնդրելու պահանջը՝ հայցվել է 11 գործով (21%), պատասխանի հնարավորություն տրամադրելը՝ հայցվել է 7 գործով (139%) եւ վճռի հրապարակման պահանջը, որը հայցվել է 4 գործով (9%)<sup>35</sup>: Ընդ որում, ամենաբարձր փոխհատուցման պահանջը հանդիսացել է «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության կողմից ներկայացված 24 մլն դրամի պահանջը, իսկ ամենացածրը՝ Լոռվա մարզի Լեռնապատ գյուղի գյուղապետ Վանո Եղիազարյանի կողմից 1 լումա փոխհատուցելու պահանջը՝ ընդդեմ «Հետք» շաբաթաթերթի լրագրող Ադրինե Թորոսյանի (թիվ ԼԴ/0628/02/11 դատական գործ): Պահանջված դրամական բոլոր փոխհատուցումների հանրագումարի միջինը կազմել է 2.952.495.00 ՀՀ դրամ, որը, ըստ մեզ, բավականին բարձր թիվ է, իսկ բոլոր ներկայացված դրամական պահանջների հանրագումարը կազմել է 126.957.301.00 ՀՀ դրամ: Այս գումարից 21.780.000.00 ՀՀ դրամը ներկայացվել է փաստաբանների վարձավճարի դիմաց: Փաստաբանների ներկայացված վարձավճարի դիմաց փոխհատուցման չափերը տատանվել են նվազագույնը 200.000.00-ից մինչեւ առավելագույնը՝ 4 մլն ՀՀ դրամ: Փաստաբանի վարձատրության դիմաց ամենահաճախ պահանջվող գումարի չափը հանդիսացել է 500.000.00 ՀՀ դրամը:

<sup>35</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Իրավունքի գերակայություն» ՀԿ, էջ 10-12

Վիրավորանքի եւ գրպարտության հետեւանքով անձանց պատվի, արժանապատվության եւ գործարար համբավի փոխհատուցման չափը որոշելիս՝ այս ինստիտուտների ապաքրեականացումից ի վեր, դատարաններն արտահայտել են տարբեր եւ ոչ միասնական դիրքորոշումներ: Ինչպես իր ուսումնասիրության մեջ նշում է «Իրավունքի գերակայություն» հասարակական կազմակերպությունը՝ «թեեւ վիճակագրությունը ցույց է տալիս, որ դատարանները հետեւողականորեն եւ էապես նվազեցրել են դրամական փոխհատուցման համար բերված պահանջները, դիտարկումները ցույց են տալիս, որ փոխհատուցման չափը որոշելու համար պատասխանողի գույքային վիճակը հաշվի առնելու առումով 2010-2011 դատական պրակտիկան համահունչ չի զարգացել: Նկատվել են միմյանցից էապես տարբերվող դատական ակտեր: Թեեւ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետը հետեւողականորեն վկայակոչվել է դատարանների կողմից, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ այս հարցը մանրամասնորեն՝ փաստերի հիման վրա քննության է ենթարկվել դատարանների կողմից: Սահմանադրական դատարանի որոշումից եւ Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ. որոշումից հետո նկատվում է այս պրակտիկայի միասնականության միտում. դատարանները սկսել են հաշվի առնել պատասխանող ընկերության գույքային դրությունը, իսկ վերադաս դատական մարմինը բեկանել վճիռը, որում նշված պահանջը չի կատարվել:<sup>36</sup>»

Պետք է նշել, որ ապաքրեականացումից հետո սկզբնական շրջանում դատարաններն իրենց վճիռներում հիմնականում բավարարել են հայցվոր կողմերի վնասի փոխհատուցման պահանջները, որոնք եղել են չափազանց բարձր եւ որպես այդպիսին չեն բխել խոսքի ազատության միջամտության համաչափության եւ անհրաժեշտության սկզբունքներից: Այսպես, օրինակ, *Սամվել Ալեքսանյանն ու այլոք ընդդեմ «Դարեսկիզր» ՍՊԸ (ԵԿԴ/2347/02/10)* գործով, դատարանը, նշելով, որ «Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 8-րդ կետով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝ գրպարտության եղանակը եւ տարածման շրջանակը, գրպարտողի գույքային դրությունը», հաշվի չի առել պատասխանողի գույքային վիճակը, արձանագրելով, որ «պատասխանողի կողմից դատարան չներկայացվեց գույքային դրությունը բնութագրող որեւէ ապացույց, որպիսի հանգամանքը հիմք կարող էր հանդիսանալ փոխհատուցման չափը նվազեցնելու համար»: Սակայն, ինչպես նշում է «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ն իր անցկացված հետազոտության մեջ, տվյալ դեպքում «փաստաբանին հնարավորություն չի տրվել արդյունավետ կերպով մասնակցել դատաքննությանը, իսկ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել փաստաբանի միջնորդությամբ ներկայացրած էական փաստերին, այդ թվում՝ նաեւ պատասխանողի գույքային դրության մասին ներկայացրած տեղեկություններին: Այս գործով ողջ դատավարության ընթացքում ո՛չ առաջին ատյանի դատարանը, ո՛չ Վերաքննիչ դատարանը եւ ո՛չ էլ Վճռաբեկ դատարանը չեն անդրադարձել այդ կարևոր հանգամանքին:» Փոխարենը, փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը նկատի է ունեցել «հասարակական կյանքում հայցվորների՝ որպես

<sup>36</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Իրավունքի գերակայություն» ՀԿ, 2012թ.

օրենսդիր իշխանության ներկայացուցիչների զբաղեցրած դիրքը, եւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ զրպարտող տեղեկությունները տարածվել են 7480 տպաքանակով հրատարակվող օրաթերթում՝ հասու դառնալով հասարակության լայն զանգվածներին, դատարանը փոխհատուցման չափը սահմանում է սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով յուրաքանչյուր հայցվորի մասով»։ Հենց այս հիմքով էլ դատարանը բավարարել է հայցը՝ պատասխանողից սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով (զրպարտության համար հասցված վնասի փոխհատուցման ամենաբարձր շեմը) հայցվորներից յուրաքանչյուրին փոխհատուցում վճարելու պահանջի մասով։ Հայցվորների պաշտոնեական դիրքը՝ որպես փոխհատուցման չափը որոշելու չափորոշիչ, դատարանի կողմից վկայակոչվել է նաեւ այլ գործերով, ինչը բավական մտահոգիչ է։ Թիվ ԵԿԴ/2479/02/10 գործով (*Բելա եւ Սեդրակ Քոչարյաններն ընդդեմ Սկիզբ Մեդիա Կենտրոն ՍՊԸ*), որտեղ, փաստորեն, որպես հայցվոր հանդես են եկել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կինն ու որդին, դատարանը կատարել է հետեւյալ եզրահանգումը. «Փոխհատուցման պահանջը բավարարելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ գործի առանձնահատկությունները՝ կապված վնասը կրած սուբյեկտների՝ հայցվորների կարգավիճակի հետ, որպիսի պայմաններում, ի տարբերություն մյուսների, վերջիններս հանրության մեջ վայելում են ավելի մեծ ուշադրություն ու հարգանք... »:<sup>37</sup> Թիվ ԳԴ/0241/02/11 գործով *Գեղարքունիքի մարզի մարզպետ Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ» թերթի խմբագրություն ՍՊԸ* գործով փոխհատուցման չափը նշանակելիս դատարանը հաշվի է առել, ի թիվս այլ հանգամանքների, հայցվորի «որպես գործադիր իշխանության ներկայացուցչի հասարակական դիրքը»։ Դատարանի նմանատիպ դիրքորոշումը հակասում է **Սահմանադրական դատարանի ՄԴՈ-997** հայտնի որոշմանը, որում նշվում է, որ «հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս»:<sup>38</sup>

Պետք է նաեւ նշել, որ սկզբնական շրջանում դատարանները, անդրադառնալով պատասխանողի գույքային դրությանը, գնահատել են այն՝ ելնելով **մարդասիրության սկզբունքից**։ Այսպես, օրինակ, ԵԿԴ/1963/02/10 գործով (*«Գլենդել Հիլզ» ՓԲԸ ընդդեմ «Սկիզբ մեդիա կենտրոն» ՍՊԸ*) գործով դատարանը նշել է. «Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետեւում է, որ օրենսդիրը, հետապնդելով օրինաչափ նպատակ, հնարավորություն է ընձեռել այն քաղաքացիաիրավական սուբյեկտին, ում գործարար համբավն արատավորվել է զրպարտության միջոցով, որպես փոխհատուցում, զրպարտողից պահանջել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով փոխհատուցում, սահմանելով չափանիշներ (զրպարտողի գույքային դրություն),

<sup>37</sup> Երևանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 06/06/2011թ. վճիռ, էջ 58

<sup>38</sup> ՏՎԽ, 2012թ. հոկտեմբերի 26-ի եզրակացությունը՝ *Գեղարքունիքի մարզպետ Նվեր Պողոսյանն ընդդեմ «Ժողովուրդ օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ* դեմ հայցի հիման վրա դատական գործի վերաբերյալ

որոնցով պետք է ուղղորդվի դատարանն արդարադատություն իրականացնելիս, այսինքն՝ օրենսդիրը, ելնելով մարդասիրության սկզբունքից, դատարանին իրավագործել է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում փոխհատուցման չափն ինքնուրույն որոշելու լայն հնարավորությամբ: Սույն դեպքում դատարանը հաստատված համարելով այն հանգամանքը, որ պատասխանողն արատավորել է հայցվորի գործարար համբավը գրպարտության միջոցով, գտնում է, որ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերությունից պետք է բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես փոխհատուցում՝ հաշվի առնելով գրպարտության եղանակը, տարածման շրջանակը, ինչպես նաև «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության գույքային դրությունը»: Մինչդեռ ընդունված միջազգային իրավական պրակտիկային համապատասխան՝ գրպարտության եւ վիրավորանքի գործերով պատասխանողի գույքային դրությունը հաշվի առնելու պահանջը պետք է բխի «լրատվամիջոցների անհարկի ճնշումներից զերծ պահելու եւ այդպիսով լրատվամիջոցների միջոցով հանրության համար անհրաժեշտ տեղեկատվության ազատ հոսքը պաշտպանելու, այլ ոչ թե մարդասիրության սկզբունքից»<sup>39</sup>: Այս առումով սույն պահանջը թերեւս լավագույնս կիրառվել է թիվ ԵԿԴ/0261/02/11 գործով (Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» խմբագրություն ՍՊԸ) գործով, որտեղ դատարանը 1087.1 հոդվածի 11-րդ մասի 2-կետը կիրառել է հետեւյալ մեկնաբանությամբ. «Ուստի դատարանը գտնում է, որ հայցվորի ներկայացրած՝ 1.000.000 ՀՀ դրամ փոխհատուցման գումարի չափը խիստ անհամաչափ պահանջ է եւ կարող է լրջորեն վնասել տվյալ լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքը եւ, ընդհանուր առմամբ, խիստ զսպող ազդեցություն ունենալ (chilling effect) ամբողջ լրատվական դաշտի ազատ արտահայտվելու իրավունքի վրա, որից կտուժի տեղեկատվություն ստանալու հանրային շահը: Հետեւաբար, առաջնորդվելով համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնելով պատասխանողի գույքային դրությունը, մասնավորապես, թերթի ոչ մեծ տպաքանակը, թերթի արժեքը, տեղեկատվության տարածման շրջանակը ... գտնում է, որ այդ մասով որպես հայցվորին հասցված վիրավորանք պատասխանողը պետք է վճարի փոխհատուցում՝ 200.000 ՀՀ դրամ գումարի չափով, որով եւ կվերականգնվի պատասխանողի խախտված իրավունքը»: «Նշված մեկնաբանությունը ամբողջությամբ համահունչ է այդ որոշումից մոտ հինգ ամիս անց ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ - 997 որոշման հետ, որում Սահմանադրական դատարանը բացահայտեց, *inter alia*, նաև 1087.1 հոդվածի 11-րդ կետի 2-րդ ենթակետի սահմանադրաիրավական բովանդակությունը»:<sup>40</sup> Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ ի տարբերություն 2010-2011 թվականների ընթացքում փոխհատուցման չափը որոշելու համար պատասխանողի գույքային վիճակը հաշվի առնելու առումով դատական պրակտիկայի, որը համահունչ չի ընթացել, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման, ինչպես նաև հետագայում Վճռաբեկ դատարանի 27/04/2012թ նախադեպային որոշման ընդունումից հետո նկատվում է այս պրակտիկայի միասնականության միտում. դատարանները սկսել են հաշվի առնել պատասխանող ընկերության գույքային դրությունը, իսկ վերադաս դատական

<sup>39</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Երավունքի գերակայություն» ՀԿ, 2012թ.

<sup>40</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Երավունքի գերակայություն» ՀԿ, 2012թ., էջ 20

մարմինը սկսել է բեկանել այն վճիռները, որոնցում նշված պահանջը չի կատարվել<sup>41</sup>:

Զրպարտության եւ վիրավորանքի գործերով պետական տուրքի չափի որոշման եւ դրա վճարման մասին դատարանների կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների վերլուծությունը նույնպես արվել է «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ի կողմից: Ստորեւ ներակայացվում է այդ վերլուծությունից մի պարբերություն.

«Թիվ ԵԱԴԴ/0231/02/11 գործով (Մուրադ Ասրյանն ընդդեմ «Մեդիա Կոնսալտ ՍՊԸ») հայցվորը ներկայացրել է գույքային եւ ոչ-գույքային պահանջներ՝ պատասխանի իրավունք եւ զրպարտության համար դրամական փոխհատուցում, սակայն դատարանի համար սահմանված պետական տուրքը վճարել է միայն ոչ-գույքային պահանջի մասով, իսկ գույքային պահանջի մասով սահմանված պետական տուրքը հրաժարվել է վճարել՝ պատճառաբանվելով, քանի որ ներկայացրել է ոչ-գույքային վնասի (բարոյական վնասի) փոխհատուցման պահանջ, իրենից պետք է գանձվի ոչ-գույքային պահանջի համար օրենքով սահմանված պետական տուրք: Ոչ գույքային պահանջի համար օրենքով սահմանված է հաստատագրված 4.000.00 դրամի չափով պետական տուրք, իսկ գույքային պահանջի համար՝ պահանջվող գումարի 2% առաջին ատյանի դատարանում եւ 3% վերաքննիչ դատարանում դատաքննության դիմաց: Դատարանները հրաժարվել են ընդունել հայցվորի մեկնաբանությունը եւ սահմանել են, որ զրպարտության դիմաց Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 8-րդ մասով սահմանված նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարելու պահանջը գույքային պահանջ է:

Դատարանների վերը նշված մեկնաբանությունը լրատվամիջոցներին պաշտպանում է մեծ գումարներ հայցող անհարկի հայցապահանջներից, որտեղ դատարան դիմելու ռիսկը կլինի նվազագույն, եթե հայցվորներն ազատվեն գումարային պահանջի 2-3%-ը վճարելու պարտականությունից եւ, անկախ գումարային պահանջի չափից, օրենքով պահանջվի վճարել միայն հաստատագրված 4.000 դրամ պետական տուրք: Հայտնի է, որ պետական տուրքի գանձումը, որը որոշակիորեն սահմանափակում է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, ինքնին հետապնդում է իրավաչափ նպատակ: Պետական տուրքի վճարումը ունի նաեւ որոշ զսպող ազդեցություն, որպեսզի հայցվորները չներկայացնեն անհարկի մեծ գումարային պահանջներ՝ ընդդեմ պատասխանող անձանց կամ կազմակերպությունների: Եթե հայցվորը գիտակցում է, որ գումարային պահանջ ներկայացնելու դիմաց ստիպված պետք է լինի վճարել գումարային պահանջի 2%-ը առաջին ատյանի դատարանում եւ 3%-ը՝ վերաքննիչ դատարանում, ամենայն հավանականությամբ չի ներկայացնի նվազ հեռանկարային կամ անհեռանկարային դատական հայց: Կարելի է պատկերացնել, թե ինչ բացասական հետեւանք կունենար լրատվամիջոցների համար, եթե դատարանները սահմանեին, որ ոչ-նյութական վնասի (տվյալ դեպքում՝ վիրավորանքի եւ զրպարտության) դիմաց բերված գումարային փոխհատուցման պահանջների դիմաց հայցվորները կարող էին վճարել հաստատագրված 4000 դրամ պետական տուրք:

<sup>41</sup> «Զրպարտության եւ վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգ», «Իրավունքի գերակայություն» ՀԿ, էջ 21

Նման դեպքում դատարան դիմելու ռիսկը հայցվորների համար նկատելիորեն կնվազեր, իսկ լրատվամիջոցների դիմաց վիրավորանքի եւ գրպարտության հիմքով բերված բողոքների թիվը նկատելիորեն կմեծանար: Հետեւաբար, դատարանի վերը նշված մեկնաբանությունը գնահատվում է որպես լրատվամիջոցների ազատության վրա դրական հետեւանք առաջացրած իրավական դիրքորոշում:

## **Միջազգային իրավական պրակտիկան եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը**

Ինչպես նշում է «Արտիկլ 19» կազմակերպությունն իր հրապարակման 13-րդ սկզբունքում՝ գրպարտչական եւ վիրավորական արտահայտություններով հասցված վնասի համար սահմանվող փոխհատուցումը պետք է հետապնդի այդ արտահայտություններով հայցվորի արժանապատվությանը հասցված վնասի փոխհատուցման եւ ոչ թե այդ արտահայտությունները հրապարակողներին պատժելու նպատակ: Նյութական փոխհատուցման չափը սահմանելիս դատարանները, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնեն նաեւ խոսքի ազատության վրա փոխհատուցման հնարավոր զսպող ազդեցությունը (*«potential chilling effect»*): Նյութական փոխհատուցումը պետք է համաչափ լինի պատճառված վնասին, իսկ փոխհատուցման առավելագույն չափը պետք է կիրառվի ելնելով գործի լրջությունից, նշում է «Արտիկլ 19-ը» իր ուղեցույցի 15-րդ սկզբունքում:

Անձի պատվին ու արժանապատվությանը հասցված վնասի փոխհատուցման համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս առումով ՄԻԵԴ-ն ունի միասնական դիրքորոշում. խոսքի ազատության նկատմամբ միջամտությունը պետք է համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին, ինչպես նաեւ ելնի ժողովրդավարական հասարակությունում դրա անհրաժեշտությունից: Միջամտության համաչափության հարցում ՄԻԵԴ-ի մոտեցումը պահանջում է, որպեսզի պահանջվող փոխհատուցման չափը որոշելիս ներպետական դատարանները հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են գրպարտության կամ վիրավորանքի մասին հայցերը: Մասնավորապես, *Ռոմանենկոն եւ այլոք ընդդեմ Ռուսաստանի* գործում<sup>42</sup> ՄԻԵԴ-ը համարել է, որ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը խախտվել է նաեւ այն պատճառով, որ ներպետական դատարանները չեն վերլուծել, թե դիմումատուի եկամուտների որ մասն են կազմել պահանջվող գումարները, եւ արդյոք դրանցով չափից ավելի մեծ բեռ չի դրվել նրանց վրա: Մինչդեռ, դիմումատուի պնդմամբ, ինչը չէր վիճարկել ՌԴ կառավարությունը, պահանջվող գումարները հավասար են եղել նրա չորս ամսվա եկամուտներին եւ, հետեւաբար, եղել են անչափ խիստ<sup>43</sup>:

<sup>42</sup> *Ռոմանենկոն ու այլոք ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 11751/03, պարբ. 48

<sup>43</sup> ՏՎԽ, 2011թ. մայիսի 31-ի եզրակացությունը՝ *Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի հիմնադիր «Հրապարակ» օրաթերթ»* ՄՊԸ հայցի վերաբերյալ



# «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

## ՀՀ իրավական եւ դատական պրակտիկան

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ եւ 9-րդ մասերն անդրադառնում են «տեղեկատվության աղբյուր» հասկացությանը: Ըստ այդ հոդվածի 6-րդ մասի՝ «անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաեւ այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին) մեկնաբանելիս դատարանի կողմից արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումներով», իսկ 9-րդ մասով նշվում է. «եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա՝ լրատվական գործունեություն իրականացնողը»:

2012 թվականի ապրիլի 27-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը կայացրել է նախադեպային որոշում, որում արտահայտել է իրավական դիրքորոշում Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ եւ 9-րդ մասերում ներառված «տեղեկատվության աղբյուր» հասկացության վերաբերյալ: Հաշվի առնելով, որ այս հասկացության սահմանումը Վճռաբեկ դատարանի որոշման մեջ կարող է բացասական անդրադարձ ունենալ լրագրողական դաշտի վրա՝ սահմանափակելով «տեղեկատվության աղբյուր» հասկացությունը, ստորեւ ներկայացնում ենք այս առնչությամբ Տեղեկատվական վեճերի խորհրդի վերլուծությունը, որը, թերեւս, կարող է կիրառվել դատարանների եւ փաստաբանների կողմից:

Ինչպես նշել է Տեղեկատվական վեճերի խորհուրդը իր՝ **2012թ. հունիսի 26-ի Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ** գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012թ. ապրիլի 27-ի որոշման վերաբերյալ եզրակացության մեջ՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները, հաշվի առնելով դրա գործառնությունները եւ հատուկ կարգավիճակը, կարող են բացասաբար անդրադառնալ լրագրող-լրագրողական աղբյուր հարաբերությունների վրա, որի արդյունքում կվտանգվի լրատվամիջոցների ազատությունը իրենց աղբյուրներից օգտվելիս, հետեւաբար՝ նաեւ լրատվամիջոցների կողմից տեղեկատվության ազատ տարածման իրավունքը: Նշված դրույթներում դատարանը սահմանել է, որ

տեղեկատվության աղբյուրներ են ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող այնպիսի «հեղինակներ» կամ «լրատվական գործակալություններ», «որոնք տարբեր միջոցներով հրապարակում են տեղեկատվություն»: Այնուհետև մեկնաբանելով «միջոցներ» հասկացությունը՝ դատարանը սահմանել է, որ այդպիսին են «անձի հրապարակային ելույթները», «պաշտոնական փաստաթղթերը», «հեղինակային ստեղծագործությունները»: Շարունակելով մեկնաբանել՝ դատարանը նշել է, որ նույնիսկ եթե տեղեկատվություն տարածողը վերարտադրել է աղբյուրից ստացված տեղեկությունը բառացիորեն կամ բարեխիղճ կերպով, վերջինս չի կարող ազատվել պատասխանատվությունից, եթե «հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում տեղեկատվության աղբյուր... 1087.1 հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն»: Հաշվի առնելով, ինչպես նշվեց վերևում, որ հեղինակ են հանդիսանում միայն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ովքեր միայն հստակ սահմանված միջոցներով են հրապարակում տեղեկատվությունը (հրապարակային ելույթ, պաշտոնական փաստաթուղթ, հեղինակային ստեղծագործություն), ստացվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ լրագրողական աղբյուրը տեղեկությունը հրապարակել է որեւէ այլ եղանակով, կասկածի տակ է նման անձի՝ որպես հեղինակ հանդիսանալու հնարավորությունը: Այսպիսով, նշված մեկնաբանությունները չափազանց նեղացնում են «տեղեկատվության աղբյուրի» ընտրությունը, որի վրա լրատվամիջոցը կարող է հիմնվել՝ պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

Վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելով **Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ** գործի հիմքում ընկած փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ թեև լրատվամիջոցը բացահայտել էր իր աղբյուրը՝ հեղինակին, ով հանդիսանում էր ոմն Անտոն Առաքելով եւ ով հայտնել էր լրատվամիջոցին Թաթուլ Մանասերյանի նկատմամբ ոստիկանության կողմից քրեական գործ հարուցված լինելու մասին, այդուհանդերձ, դատարանը որոշել է, որ վերջինս չէր կարող համարվել տեղեկատվության աղբյուր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի իմաստով, քանի որ «չի հանդիսանում տեղեկատվության տարածման որեւէ միջոցի հեղինակ կամ լրատվական գործունեություն իրականացնող»: Այնուհետև Վճռաբեկ դատարանն ընդհանրացված եզրահանգում է կատարել, ըստ որի այնպիսի անձի հրապարակած զրպարտող կամ վիրավորող տեղեկությանը հղում կատարելը, ով չի հանդիսանում տեղեկատվության աղբյուր, չի կարող համարվել տեղեկատվության աղբյուրի բացահայտում:

## **Միջազգային իրավական պրակտիկան եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը**

Ըստ Տեղեկատվական վեճերի խորհրդի՝ նշված որոշումով ՀՀ իրավական դաշտ է ներմուծվում **պատշաճ եւ ոչ պատշաճ** աղբյուր հասկացությունը, որով սահմանափակվում են այն աղբյուրների շրջանակները, որոնցից կարող են օգտվել

լրատվամիջոցները: Նման մոտեցումը հակասում է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու լրագրողների իրավունքի մասին» Թիվ (2000)7 հանձնարարականին, որի համաձայն տեղեկատվության աղբյուր է հանդիսանում «*լրագրողին տեղեկություն տրամադրող ցանկացած անձ*»: Նույն Հանձնարարականի բացատրական մասում վերոնշյալ սկզբունքը մեկնաբանելիս նշվում է, որ լրագրողներին պետք է հնարավորություն տրվի ստանալ տեղեկություններ «բոլոր տեսակի աղբյուրներից», եւ այդ պատճառով «անհրաժեշտ է այդ տերմինը լայն մեկնաբանել» ազգային օրենսդրությունում կամ պրակտիկայում:

Վճռաբեկ դատարանի որոշումը, փաստորեն, լրատվամիջոցներին կանգնեցնում է ընտրության առջեւ. կամ հրապարակել անհայտ աղբյուրից ստացված արժեքավոր տեղեկությունը՝ դրա հետեւանքների ռիսկը վերցնելով իր վրա, կամ ձեռնպահ մնալ անհայտ աղբյուրից ստացված տեղեկության հրապարակումից՝ նույնիսկ եթե դա արժեքավոր տեղեկություն է: Երկրորդի դեպքում ի վերջո տուժում է հանրությունը:

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐՈՎ

Զրպարտության եւ վիրավորանքի գործերով դատական պրակտիկայի ուսումնասիրումը ցույց է տվել, որ ՀՀ դատարանների հակասական իրավական դիրքորոշումները ոչ միայն պայմանավորված են եղել նյութական իրավունքի անիրավաչափ մեկնաբանությամբ ու կիրառությամբ, այլ նաեւ դատավարական իրավունքների անհամաչափ սահմանափակումներով, ինչն, անկասած, մի հանգամանք է, որը նույնպես պետք է հաշվի առնվի արտահայտվելու ազատության սահմանափակումների իրավաչափությունը գնահատելիս: Ստորեւ ներկայացնում ենք «Իրավունքի գերակայություն» հասարակական կազմակերպության կողմից արված մոնիթորինգի արդյունքում վերհանված դատավարական խախտումներով գործերը:

### Ապացուցման պարտականությունը կատարելու նպատակով ներկայացված միջնորդությունների մերժումը

Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զրպարտության եւ վիրավորանքի գործերով վիճահարույց փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այդուհանդերձ, հաճախ դատարաններն անհարկի մերժում են պատասխանող կողմի միջնորդությունը, որը վերջինս ներկայացնում է օրենքով իր վրա դրված պարտականությունը կատարելու նպատակով: Հետեւաբար, դատարանները պետք է առանձնակի զգուշություն ցուցաբերեն լրատվամիջոցի դատավարական իրավունքներն ապահովելու ուղղությամբ: Այնպիսի հանգամանքներում, երբ զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը, իսկ դատարանը պատասխանողին զրկում է նման հանգամանքները հիմնավորելու կամ, օրինակ, «բարեխիղճ հայտարարության» պաշտպանությունն իրականացնելու նպատակով ապացույցներ կամ պնդումներ ներկայացնելու հնարավորությունից, Եվրոպական դատարանն արձանագրում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ազգային մարմինների կողմից սահմանափակումները կիրառելիս միջոցների եւ եղանակների ընտրության հայեցողության իրավունքի խախտում (Ջերուսալեմն ընդդեմ Ավստրիայի, թիվ 26958/95, 27/02/2001, § 46: Նովայա Գազետա վ Կորոնեժե ընդդեմ Ավստրիայի, թիվ 27570/03, 21/12/2010, § 56): Վիրավորանքի եւ զրպարտության գործերով դատավարական նման սահմանափակումներին Եվրոպական դատարանը «վճռորոշ նշանակություն» է տալիս եւ, եթե հանգում է եզրահանգման, ըստ որի այնպիսի հանգամանքներում, երբ անհնարին կլինեք որոշել, թե ինչպիսին կլինեք դատավարության ելքը, եթե պատասխանողը հնարավորություն ունենար

ներկայացնել իր բոլոր պնդումները եւ ապացույցները, նման դատավարական սահմանափակումներն անհրաժեշտ չեն ժողովրդավարական հասարակարգում՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համակցությամբ (**Կաստելլան ընդդեմ Իսպանիայի, թիվ 11795/85, 23/04/92, § 49 եւ 50**):

Ներկայացնենք հետեւյալ օրինակը դատավարական իրավունքի նման սահմանափակման վերաբերյալ. *Թաթուլ Մանասերյանն ընդդեմ «Շամանակ» օրաթերթի* գործով պատասխանող լրատվամիջոցը որոշել է դատաքննության ընթացքում բացահայտել իր աղբյուրը՝ Անտոն Առաքելովին, եւ միջնորդել է դատարանին հրավիրել իր աղբյուրին եւ հարցաքննել որպէս վկա, սակայն առաջին ատյանի դատարանը մերժել է միջնորդությունը, իսկ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքի այդ հատվածին, թեւ ներկայացրած փաստարկների շարքում հստակորեն նշված է եղել նման փաստարկի առկայության մասին: Այս հանգամանքը Վերաքննիչ դատարանի կողմից չի ներառվել էական նշանակություն ունեցող փաստերի շարքում:

### **Դատավարության ընթացքում լրատվամիջոցի փաստաբանին չեն տրամադրվել քաղաքացիական գործի նյութերը**

Թիվ ԵԿԴ/2347/02/10 գործով (*Մամվել Ալեքսանյանն ու այլոք ընդդեմ «Դարեսկիզր» ՄՊԸ*) առաջին ատյանի դատավարության ողջ ընթացքում պատասխանող լրատվամիջոցի փաստաբանին չեն տրամադրվել քաղաքացիական գործերի նյութերի պատճենները՝ մի իրավունք, որը պարզորոշ ամրագրված է դատավարական իրավունքով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մաս): Գործի նյութերի պատճենները տրամադրելու մասին փաստաբանի միջնորդությանը դատարանի կողմից պատշաճ արձագանքի չի արժանացել: Գործով, ըստ էության, դատական քննությունն անցկացվել է փաստաբանի բացակայությամբ: Այսինքն, առաջին ատյանի դատարանի ողջ դատավարության ընթացքում պատասխանողի փաստաբանը հնարավորություն չի ունեցել վիճարկել հայցվորների պնդումները, ինչպէս նաեւ ներկայացնել իր սեփական պնդումները եւ ապացույցները՝ գործի նյութերի հիման վրա: Խախտումը վերացել է Վերաքննիչ դատարանի դատաքննության ընթացքում:

### **Դատավարության ընթացքում լրատվամիջոցի փաստաբանին չի տրամադրվել բավարար ժամանակ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար**

Թիվ ԵԿԴ/2347/02/10 գործով (*Մամվել Ալեքսանյանն ու այլոք ընդդեմ «Դարեսկիզր» ՄՊԸ*) առաջին ատյանի դատարանում պատասխանող լրատվամիջոցի ներկայացուցչի միջնորդությունը՝ դատական նիստը 15 օրով հետաձգելու մասին, բավարարվել է մասնակի՝ 7 օրով: Միջնորդությունն արվել էր գործի նյութերին ծանոթանալու նպատակով: Թեւ դատարանն ուներ հայեցողության իրավունք, այդուհանդերձ, ոչնչով, նույնիսկ դատավարության ողջամիտ ժամկետների

պահպանման սկզբունքով կաշկանդված չէր դատական նիստը հետաձգել այն ժամկետով, որը խնդրել էր փաստաբանը, հատկապես հաշվի առնելով, որ պահանջված ժամկետն ինքնին նույնպես ողջամիտ էր:

## **Դատավարության ընթացքում դատարանները չեն ապահովել լրատվամիջոցի գլխավոր խմբագրի ներկայությունը**

Թիվ ԵԿԴ/2347/02/10 գործով (*Մամվել Ալեքսանյանն ու այլոք ընդդեմ «Դարեսկիզ» ՄՊԸ*) փաստաբանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանողի ներկայացուցիչը համարվում էր լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը եւ ինքն էր ղեկավարում լրատվական քաղաքականությունը եւ միայն նա կարող էր լիարժեք ներկայացնել տվյալ գործով պատասխանողի ներկայացուցչությունը, խնդրել էր ապահովել նրա ներկայությունը, ինչը դատարանը մերժել էր: Կարելու է նշել, որ դատարանը ներպետական դատավարական որեւէ նորմով կաշկանդված չէր դա անել, առավել եւս, որ գլխավոր խմբագիրն է վարում լրատվամիջոցի լրատվական քաղաքականությունը եւ նրա ներկայությունը կնպաստեր գործով օբյեկտիվ քննությանը: Ուշագրավ է նաեւ հայցվորների փաստաբանի արտահայտած դիրքորոշումը բարձրացված հարցի կապակցությամբ. *«նա դատապարտյալ է, գտնվում է իր ազատագրկման վայրում, որպիսի պայմաններում չէր կարող հանդես գալ որպես այլ անձի շահերի ներկայացուցիչ դատարանում»*: Նման դիրքորոշումները ավելորդ ֆորմալիզացում են ազատ արտահայտվելու իրավունքի առարկան. եթե խնդիրը վերաբերում է մարդու իրավունքներին, ապա միշտ չէ, որ խնդրին պետք է մոտենալ բացառապես ֆորմալ իրավական, դատավարական կատեգորիաներով: Տվյալ դեպքում, կրկնենք, դատարանը որեւէ նորմով կաշկանդված չէր ապահովելու գլխավոր խմբագրի ներկայությունը, հետեւաբար կարող էր դրսևորել հայեցողություն՝ հաշվի առնելով խնդրի հանրայնությունը:



ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

[www.ypc.am](http://www.ypc.am)